

Ուսուցչի ձեռնարկ

6

Աճել ձախողումների միջոցով

Ներում ինդիբել, փոխհատուցել և ձախողումից վերականգնվել



Իմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար

Աճել ձախողումների միջոցով

Ներում խնդրել, փոխհատուցել և ձախողումից վերականգնվել

Չեղինակ՝ Դեյվիդ Բեթթի

Ուսուցչի ձեռնարկ

5-րդ խմբագրում



Աճել ճախողումների միջոցով
Ուսուցչի ձեռնարկ
5-րդ խմբագրում
Յեղիմիակ՝ Դեյվիդ Բեթթի

Եթե այլ կերպ նշված չէ, աստվածաշնչյան բոլոր մեջբերումներն արված են Trinitarian Bible Society (Tyndale House, Dorset Road, London, SW19 3NN, England)-ի կողմից կատարված ժամանակակից թարգմանությունից:

Բոլոր իրավունքները, ներառյալ ներկայացնելու կամ որևէ ձևով՝ ամբողջական կամ մասնակի, վերատպելու, պաշտպանված է Համաշխարհային հեղինակային իրավունքի կոնվենցիայով և մյուս կոնվենցիաներով, պայմանագրերով ու հռչակագրերով:

Այս դասընթացը սկզբում լույս է տեսել անգլերեն, Growing Through Failure, 5th edition վերնագրով:

Այս նյութը կարող է վերատպվել և բաժանվել, որպեսզի օգտագործվի Թին Չելենջի, նմանատիպ ծրագրերի, տեղական եկեղեցիների, դպրոցների, այլ կազմակերպությունների և անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Նրանք, ովքեր կցանկանան վաճառել այս նյութերը, պետք է գրավոր թույլտվություն ստանան Գլոբալ Թին Չելենջից:

Այս դասընթացը *Խմբային Ուսուցումներ Նորադարձ Քրիստոնյաների Համար* դասընթացի մի մասն է, որը մշակվել է, որպեսզի օգտագործվի եկեղեցիներում, բանտային ծառայություններում, Թին Չելենջում և նմանատիպ ծառայություններում, որտեղ աշխատում են նորադարձ քրիստոնյաների հետ: Դասընթացի մեջ մտնում են՝ Ուսուցչի ձեռնարկը, Ուսանողի ձեռնարկը, Ուսուցման ուղեցույցը, Մտուգարքը և Վկայականը: Դրանց մասին առավել տեղեկություններ ստանալու համար դիմել:

Global Teen Challenge
PO Box 511
Columbus, GA, 31902 USA
Email: gtc@globaltc.org
Web: www.globaltc.org
www.iTeenChallenge.org



Աճել ձախողումների միջոցով

Ամենասովորական բաներից մեկը նորադարձ քրիստոնյաների կյանքում ձախողումն է: Նորահավատները հաճախ լսում են, որ «քրիստոնյաները չպետք է ձախողվեն», հատկապես, եթե կատարելապես նվիրված են Քրիստոսին: Այս դասընթացին մենք անկեղծ հայացք կգցենք ձախողման թեմային: Այն նորմալ մաս է կազմում յուրաքանչյուր անձնավորության կյանքում, և Աստված շատ գործնական բաներ ունի ասելու այն մասին, թե ինչպես արձագանքել ձախողմանը և ինչպես այն կանխել:

1

Գլուխ 1. Իմ ձախողման պատճառները

Այս դասն ուսումնասիրում է տարբեր տեսակի ձախողումներ և այն, թե ինչ է անում Աստված, երբ մենք ձախողվում ենք: Մենք մանրամասն կդիտարկենք այն խնդիրները, որոնք պատճառ են հանդիսանում մեր ձախողումների համար:

2

Գլուխ 2. Ձախողումից վերականգնվելու առաջին քայլերը

Այս գլուխը կենտրոնանում է այն խնդրին, թե մենք ինչ պետք է անենք, երբ ձախողվում ենք: Մենք նաև կքննարկենք աստվածաշնչյան ուղեցույցներ առ այն, թե ինչպես ներողություն խնդրել և փոխհատուցել անցյալի սխալների համար:

3

Գլուխ 3. Ինչպե՞ս աճել ձախողումների միջոցով

Այս գլուխն աճի երեք հիմնական փուլերի մասին է, որոնք վերաբերում են մեր ձախողումներին: Առաջին. մեր աճը պետք է կենտրոնանա մեր խնդիրների հաղթահարմանը, որոնք պատճառ են հանդիսանում մեր ձախողումների համար: Երկրորդ. մենք պետք է սովորենք ապրել առողջ ապրելակերպով: Երրորդ. մենք պետք է քայլեր ձեռնարկենք՝ կանխելու այդ ձախողման կրկնությունը:

4

Գլուխ 4. Կրկնակի անկում

Ի՞նչ է կրկնակի անկումը: Ի՞նչն է պատճառ հանդիսանում կրկնակի անկման համար: Ինչպե՞ս կարելի է կանխել կրկնակի անկումը: Որո՞նք են կրկնակի անկման նախնական ազդանշանները: Ի՞նչ պետք է անել, եթե կրկնակի անկում է տեղի ունեցել: Մենք հետազոտում ենք այս հարցերը, որպեսզի տեսնենք, թե ինչպես կարող ենք սովորել հաղթահարել ձախողումը մեր կյանքի մեծ ասպարեզներում:

Ինչ է ներառված Ուսուցչի ձեռնարկում

Ուսուցչի ձեռնարկն ունի չորս բաժին: Յուրաքանչյուր բաժին առանձնացված է հիմնական վերնագրով:

1. Դասի ծրագրեր ուսուցչի համար,
2. Ուսանողի ձեռնարկ,
3. Ուսուցման ուղեցույց,
4. Ուսանողի ստուգարք, պատասխաններ և դասընթացի վկայական:

Բացատրությունը, թե ինչպես օգտագործել յուրաքանչյուր բաժինը, տրվում է անմիջապես տվյալ էջը ներկայացնելուց հետո:

Նախարան

Այս դասընթացը մեկն է այն դասընթացներից, որոնք նախատեսված են նորադարձ քրիստոնյաների համար: Մենք հավատում ենք, որ այսօր մեծ կարիք կա օգնելու նորադարձ քրիստոնյաներին Քրիստոսի ուսմունքը գործնականորեն կիրառելու իրենց կյանքում: Դասընթացները կարող են օգտակար լինել նաև եկեղեցու երիտասարդների և մեծահասակների ծառայության մեջ, ովքեր ուզում են քրիստոնեությունն իրենց ամենօրյա կյանքի առավել գործնական մասը դարձնել:

Այս դասընթացի և ամբողջ *Խմբային ուսուցումներ նոր քրիստոնյաների համար*-ի հիմնական նպատակն է՝ նորադարձ քրիստոնյաներին ներկայացնել նշանակալի, կյանքին վերաբերող հարցեր: Մենք չենք փորձում ներկայացնել այդ թեմաների սպառիչ ուսումնասիրությունները:

Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի ուսումնական ծրագրի կոմիտեն ծրագրավորում է շարունակել վերանայել այս դասերը: Մենք պատրաստ ենք ընդունել այս նյութերի զարգացման վերաբերյալ ձեր ունեցած ցանկացած քննադատություն կամ միտք:

Ինչպես օգտագործել Ուսուցչի ձեռնարկը

1. Դասերի ծրագրեր ուսուցչի համար

Այս բաժնի առաջին էջն ընդհանուր պատկերացում է տալիս ողջ դասընթացի վերաբերյալ:

Հաջորդ էջը *Դասարանական Հանձնարարության Ցուցակ* -ի մի օրինակ է: Այն ցույց է տալիս, թե երբ պետք է Ուսուցման ուղեցույցի յուրաքանչյուր նախագիծ լրացվի և երբ յուրաքանչյուր հարցաշար և ստուգարք տրվի: Ուսուցման ուղեցույցներն արդեն ունեն այս ձևի չլրացված բլանկները հետևի կազմի ներսի կողմում:

Հաջորդը կլինի դասերի ծրագրերը յուրաքանչյուր դասի համար: Այս բոլոր դասերի ծրագրերն ունեն Աստվածաշնչյան Բանալի ճշմարտություն և Բանալի համար: Դրանք կարող են տրվել դասի սկզբում: Դրանք նաև օգնում են քննարկումը պահել հիմնական թեմայի վրա ողջ դասի ընթացքում:

Ներքևում կան Աստվածաշնչյան Բանալի ճշմարտության և Բանալի համարի մի քանի մեկնաբանություններ՝ թե ինչպես սովորեցնել դասը: Շատ դեպքերում հղումներ են արվում Ուսանողի ձեռնարկին կամ Ուսուցման ուղեցույցի նախագծերին:

Յուրաքանչյուր դաս ամփոփվում է «անձնական կիրառություն» քայլով: Մրա կարևորությունը չի կարող գերազանցապես լինել: Նորադարձ քրիստոնյաները կարիք ունեն հստակ առաջնորդություն ստանալու, թե ինչպես այս աստվածաշնչյան ուսուցումները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում: Համոզված

եղեք, որ բավականաչափ ժամանակ էք տալիս ձեր ուսանողներին, որպեսզի սկսեն այս անձնական կիրառման ընթացքը:

Յուրաքանչյուր դասի ծրագրի վերջում ուսանողի համար կա հանձնարարությունների ցուցակ:

Այս դասընթացներից շատերը նախատեսված են հինգ դասերի համար՝ յուրաքանչյուրը մեկ ժամ տևողությամբ: Այս բոլոր 14 դասընթացները կարելի է ավարտել 3-4 ամիսների ընթացքում, եթե դուք շաբաթական հինգ օր դասեր ունենաք: Եթե դուք ունենաք շաբաթական մեկ ժամ, ապա մեկ դասընթացը կարող էք ավարտել մեկ ամսում, իսկ ամբողջ շարքը՝ մոտ մեկ տարում: Այս դասերից շատերը հեշտությամբ կարելի է անցկացնել ավելի երկար ժամանակահատվածում կամ վերածել ավելի շատ դասերի:

2. Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը կարող է ծառայել երկու նպատակների: Դուք կարող եք հանձնարարել ուսանողներին՝ կարդալ համապատասխան էջերը՝ տրված դասին նախապատրաստվելու համար: Կամ էլ կարող եք հանձնարարել նրանց՝ այն կարդալ դասը անցկացնելուց հետո՝ վերանայելու և ամրացնելու այն, ինչ ուսուցանվեց դասարանում:

Մենք քաջալերում ենք, որ դուք ուսանողներին հանձնարարեք նշումներ անել դասարանում, չնայած այն բանին, որ նրանց տալիս էք Ուսանողի ձեռնարկը: Նրանց անձնական նշումները և դասարանական քննարկումները կօգնեն պարզաբանել Ուսանողի ձեռնարկի որոշ թեմաներ:

3. Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցի նախագծերը նախատեսված են ուսանողներին դասասենյակից դուրս աշխատանքով ապահովելու համար: Որոշ նախագծեր կօգնեն ուսանողներին նախապատրաստվել հաջորդ քննարկմանը:

Նախագծերից շատերը նախատեսված են օգնելու ուսանողներին՝ ավելի խորը նայել դասարանում քննարկված որոշ թեմաներ: Այս հանձնարարությունների հիմնական նպատակն է՝ օգնել ուսանողներին բացահայտել, թե ինչպես աստվածաշնչյան ճշմարտությունները կիրառեն իրենց ամենօրյա կյանքում:

4. Ուսանողի ստուգարք և Ստուգարքի պատասխաններ

Ստուգարքները նախատեսված են պարզ կերպով գնահատելու յուրաքանչյուր ուսանողի առաջընթացը՝ դասընթացի ընթացքում անցած աստվածաշնչյան ճշմարտությունները հասկանալու հարցում: Ստուգարքի պատասխանները գտնվում են այս Ուսուցման ձեռնարկի՝ ուսանողի ստուգարքի նմուշի վերջին էջից անմիջապես հետո:

5. Դասընթացի վկայական

Դասընթացի վկայականը որպես գնահատանք պետք է տրվի նրանց, ովքեր կավարտեն դասընթացի համար պահանջվելիք ամբողջ աշխատանքը և բարեհաջող կհանձնեն ստուգարքը: Դասընթացի վկայականը գտնվում է Ուսուցչի ձեռնարկի վերջին էջում: Ավարտական վկայական կարող է տրվել նաև այն ուսանողներին, ովքեր կավարտեն *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի բոլոր 14 դասընթացների շարքը: Նմուշը ներառված է «Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար» գրքում:

Դասընթացների ակունքները

Սողոմոնն ասաց, որ արևի տակ նոր բան չկա: Նույնը կարելի է ասել նաև այս դասերի մասին: Այս մտքերից շատերը նոր չեն: Մենք ուզում ենք արտահայտել մեր հատուկ գնահատականը *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտին* այն ազդեցության համար, որ նրանք ունեցել են այս նյութերը մշակող մարդկանց վրա: Այս դասերից շատերը կրում են *Կյանքի հիմքային սկզբունքների ինստիտուտի* հետքերը:

Ես նաև ուզում եմ արտահայտել իմ խորին երախտագիտությունն այն բազմաթիվ ուսուցիչներին ու հազարավոր նորադարձ քրիստոնյաներին, ովքեր օգտագործել են այս նյութերը վերջին մի քանի տարիների ընթացքում: Նրանց տված գաղափարները մեծ դեր են խաղացել այս դասընթացների մշակման մեջ: Ես նաև շատ երախտապարտ եմ Դոն Վիլկերսոնին, որն ինձ հնարավորություն տվեց աշխատել Բրուկլինում (Նյու Յորք) 1971-1975թթ.-ին: Այդ տարիներին էր, որ *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար*-ի մշակումն առաջին անգամ սկսվեց:

Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար դասընթացների հինգերորդ խմբագրումը մշակվել է Թին Չելենջի՝ ԱՄՆ-ի Ուսումնական ծրագրի կոմիտեի օգնությամբ: Հատուկ շնորհակալություն բոլոր նրանց, ովքեր աջակցել են այդ վերանայման գործընթացին:

Այս նյութերը վերատպելու վերաբերյալ մոտեցումը

Ուսուցչի ձեռնարկը, ինչպես նաև ուսանողական մյուս բոլոր նյութերը, որոնք վերաբերում են *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացներին, պաշտպանված են հեղինակային իրավունքով: Այս նյութերը կարող են վերատպվել և բաժանվել օգտագործելու նպատակով Թին Չելենջում, նմանատիպ ծրագրերում, տեղական եկեղեցիներում, դպրոցներում և այլ կազմակերպություններում, ինչպես նաև անհատների համար: Այս նյութերը նաև կարող են ներբեռնվել համացանցում հետևյալ կայքից՝ www.iTeenChallenge.org: Սակայն այս նյութերը չեն կարող վաճառվել, այլ միայն՝ անվճար բաժանվել: Նրանք,

ովքեր ուզում են տպագրել և վաճառել դրանք, պետք է գրավոր թույլտվություն ձեռք բերեն Գլոբալ Թին Չելենջին:

Խորհուրդ է տրվում ուսուցման հետևյալ հերթականությունը

Այս դասընթացը *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* շարքի 14 ուսուցումներից մեկն է: Բոլոր 14 դասընթացները այստեղ ներկայացված են ուսուցման խորհուրդ տրված հերթականությամբ: Հերթականության ցանկը մշակվել է դասընթացների շարունակական ուսուցման համար: Ավելի լավ կլինի այն ձևել 14 ճաղեր ունեցող անիվի նման: Այս դասընթացները կառուցված չեն մեկը մյուսի վրա: Ամեն մեկն առանձին է: Այնպես որ, ուսանողները կարող են միանալ դասերին ցանկացած կետում և շատ հեշտությամբ հարմարվել:

1. Ինչպե՞ս կարող եմ վստահ լինել, որ ես ճշմարիտ քրիստոնյա եմ
2. Թուուցիկ հայացք Աստվածաշնչին
3. Վերաբերմունքներ
4. Փորձություններ
5. Հաջողակ քրիստոնեական կենսակերպ (ներառում է դասեր Սուրբ Հոգու ծառայության վերաբերյալ)
6. Աճել ճախողումների միջոցով
7. Քրիստոնեական պրակտիկա (շփում Տեղական եկեղեցու հետ)
8. Հնազանդություն Աստծուն
9. Հնազանդություն մարդուն
10. Բարկություն և անձնական իրավունքներ
11. Ինչպես ուսումնասիրել Աստվածաշունչը
12. Մեր և ինքնաընդունելություն
13. Անձնական փոխհարաբերություններ մարդկանց հետ
14. Հոգևոր զորություն և գերբնականը

Այս դասընթացների ուսուցման նպատակով լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «Ուսուցիչներին ներկայացնել խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար» գիրքը:

Դասի ծրագրեր ուսուցիչների համար

Տե՛ս սույն Ուսուցչի ձեռնարկի 4-րդ էջը՝ այս դասերի ծրագրերի օգտագործման վերաբերյալ ավելի շատ տեղեկություններ ստանալու համար:

Դասընթացի վերանայում

1. Դասից մեկ կամ երկու օր առաջ դու կարող ես դասընթացը ներկայացնել ուսանողներին և նրանց տալ առաջին մի քանի հանձնարարությունները: Ուսուցման ուղեցույցի առաջին նախագիծը պետք է լրացված լինի առաջին դասաժամի համար: Բաժանի՛ր Ուսանողի ձեռնարկը և թող նրանք կարդան առաջին գլուխը, որի քննարկման համար կլինի առաձին դասաժամ:
2. Սույն Ուսուցչի ձեռնարկի հաջորդող էջերից մեկում կա **Դասարանական հանձնարարության ցուցակի** մի օրինակ, որի վրա գրված են այն ամսաթվերը, թե երբ պետք է յուրաքանչյուր հանձնարարություն կատարվի: Թող նրանք լրացնեն համապատասխան ամսաթվերը՝ օգտագործելով իրենց Ուսուցման ուղեցույցի վերջում գտնվող **Դասարանական հանձնարարության ցուցակի** դատարկ օրինակը:
3. Յուրաքանչյուր դասի ծրագիր ներկայացնում է մեկ կամ ավելի «Դասի ջերմացման գործողություն» դասի սկզբում օգտագործելու համար: Այս գործողությունների հիմնական նպատակն է՝ օգնել ուսանողներին՝ կենտրոնացնել իրենց ուշադրությունը դասի հիմնական թեմայի վրա: Մենք ուզում ենք ստեղծել ջերմության և անկեղծության մթնոլորտ, որտեղ բոլոր ուսանողներն իրենց ազատ կզգան՝ դասի քննարկմանը մասնակցելիս:
4. Դու պետք է որոշես, թե քանի դասաժամ ես ուզում օգտագործել այս դասընթացի ուսուցման համար: Կան դասերի ծրագրեր հինգ դասաժամի համար (5-րդ դասը ստուգարքի համար է): Բայց և այնպես, այս դասընթացը հեշտությամբ կարելի է ընդարձակել ավելի շատ դասաժամերի, եթե դու ժամանակ ունես: Երկրորդ դասը վերաբերում է ներողամտությանն ու փոխհատուցմանը: Դու հեշտությամբ կարող ես առանձին դասաժամ հատկացնել այս երկու թեմաներից յուրաքանչյուրի համար:
5. Ողջ դասընթացի ժամանակ առկա է այնպիսի իրավիճակ, որ ուսանողները նեղվածություն կամ ընկճվածություն ապրեն, երբ հետ նայեն իրենց անցած ձախողումներին: Այս դասընթացի խթանող իմաստն այն է, որ Աստված կարող է հույս բերել իրենց կյանքի մեջ՝ չնայած նրանց անցած ձախողումներին: Մենք ուզում ենք, որ նրանք հայտնաբերեն այն ձևերը, որոնցով Աստված կարող է բժշկել նրանց՝ իրենց անցած ձախողումներից: Մենք նաև ուզում ենք պարզորոշ կերպով սովորեցնել, թե ինչպես գործ ունենալ պոտենցիալ խնդիրների հետ, որպեսզի ուսանողները կամ քրիստոնյաները շարունակաբար չձախողվեն, հատկապես երբ ձախողումը տանում է մեղքի:
6. Ձախողման վերաբերյալ այս դասընթացը հեշտությամբ կարելի է ուղղել քո ուսանողների առաջնային կարիքներին: Նույն դասընթացում Ուսանողի ձեռնարկի շատ օրինակներ և ուսուցումներ վերաբերում են թմրամոլության դեմ պայքարողների ձախողումներին: Պետք է ընդգծել, որ դասընթացը գործնական ուսուցում է բոլորի համար՝ անկախ այն բանից, նրանք թմրանյութ

օգտագործել են, թե ոչ: Այս սկզբունքները կիրառելի են կյանքի վրա իշխող ցանկացած խնդրի դեպքում, ինչպես նաև այն հարցերի, որ որոշ մարդիկ խնդիր չեն էլ համարում:

7. Մեկ այլ խնդիր նրանց համար, ովքեր կուսուցանեն այս դասընթացը, «վերականգնում» և «կրկնակի անկում» բառերի գործածումն է: Քո անցյալի հետ կապված՝ այս բառերը կարող են կիրառվել որպես սահմանումներ, քանի որ դրանք ընդհանուր ընդունված գործածություն ունեն կախվածության բուժման ասպարեզում: Խնդրում եմ, հասկացե՛ք, որ մենք զգույշ ենք եղել սահմանելիս, հաշվի ենք առել, թե ինչպես ենք գործածելու այս տերմինները: Երբ մենք խոսում ենք վերականգնման մասին, չենք խոսում ընդամենը քայլերի մասին, որոնք կօգնեն նրանց՝ ինքնուրույն հաղթահարել անցյալի ձախողումները: Մենք նաև ընդունում ենք Աստծո հեղաշրջող գործության կարիքը՝ մեր կյանքում արմատական փոփոխություններ բերելու համար:

«Կրկնակի անկում» բառակապակցության հետ կապված մենք փորձել ենք օգտագործել այն լեզուն, որ սովորական՝ ոչ ճշմարիտ քրիստոնյան, կամ նորադարձ քրիստոնյան կկարողանար հասկանալ: Մենք չենք ուզում նվազեցնել այն հոգևոր վնասը, որ տեղի է ունենում, երբ ինչ-որ մեկը նորից ընկնում է և, միգուցե, նաև խախտում Աստծո օրենքներից մեկը:

Դասարանական Հանձնարարության Ցուցակ

Դասընթացի անվանումը _____ Աճել ձախողումների միջոցով _____

Հարցաշար	Անգիր համարներ	Ամսաթիվ
1	Մատթեոս 6:14-15	օր 2.
2	Սաղմոս 32:8-9	օր 3.
3		

Նախագծեր	Ամիս, ամսաթիվ
1	օր 1. Առաջին հայացք ձախողմանը
2	օր 2. Ներում խնդրել և փոխհատուցել
3	օր 3. Իմ ձախողումը
4	օր 4. Որո՞նք են քո դրդումները (դրդապատճառները):

Ստուգարք Ամսաթիվ _____ օր 5.

Դաս 1.

Իմ ձախողման պատճառները:

1

1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:

Ես պետք է գտնեմ իմ կյանքի արմատական խնդիրները, երբ ձախողվում եմ:

2. Բանալի համար. Եբրայեցիներին 4:16.

«Ուրեմն, համարձակությամբ մոտենանք շնորհաց աթոռին, որպեսզի ողորմություն ընդունենք և շնորհ գտնենք՝ կարիքի ժամանակ մեզ օգնելու»:

3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1. «Առաջին հայացք ձախողմանը» բաժինը կօգտագործվի այստեղ:

4. Դասի ջերմացման գործողություն (5-10 րոպե):

Թող ուսանողները կիսվեն իրենց պատասխաններով, որ տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1. «Առաջին հայացք ձախողմանը» բաժնի 1-6-րդ հարցերին: Օգտագործի՛ր դա որպես գործիք՝ նրանց ուշադրությունը այսօրվա դասի մեր թեմայի՝ ձախողման վրա կենտրոնացնելու համար:

1. Հաջողակ քրիստոնյաները երբևէ ձախողվո՞ւմ են:
2. Ձախողումը միշտ մե՞ղք է:
3. Մի օրինակ՝ կ'բեր, թե ինչպես է ինչ-որ մեկը մեծ ձախողում ունեցել:
(Մա կարող է լինել քո ձախողումը, կամ մեկ ուրիշի, օրինակ, քաղաքական որևէ գործչի :)
4. Աստված միշտ բարկանո՞ւմ է, երբ քրիստոնյաները ձախողվում են:
5. Դու քո կյանքում երբևէ կրկնակի անկում ունեցե՞լ ես
(կրկնակի անկում նշանակում է՝ հաղթահարել որևէ խնդիր կամ մեղք, իսկ հետո կրկին ընկնել նույն բանի մեջ):

1

6. Ինչպե՞ս կգնահատես ինքդ քեզ՝ որպես հաջողակ կամ որպես ձախողակ:
Իմ միավորը _____: Ինքդ քեզ գնահատի՛ր 1-ից 10 միավորների շրջանակում: «Մեկ» նշանակում է, որ դու քեզ կատարյալ ձախողակ ես համարում: «Տասը» նշանակում է, որ դու միշտ հաջողակ ես եղել և երբևէ չես ձախողվել:

Մեջբերումը՝ Աձել ձախողումների միջոցով, Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1.

4-5 բույսեր հատկացրո՛ւ, որպեսզի քննարկես նրանց պատասխաններն այս հարցերին: 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ հարցերի համար կարող ես հարցնել և իմանալ, թե քանի՛սն են «այդ» պատասխանել, իսկ քանիսը՝ «ոչ»:
Այս հատվածում կարիք չկա նրանց հետ բանավեճի մեջ մտնել, թե նրանցից ով է ճիշտ, ով՝ սխալ: Բացատրի՛ր, որ մենք այս հարցերի շուրջ ավելի մանրամասն կխոսենք բոլոր դասերի ընթացքում:

3-րդ հարցը զվարճանալու համար է, նաև՝ քեզ գործնական օրինակ տալու, որը կարող ես օգտագործել այսօրվա դասաժամի ընթացքում:

Քանի որ Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ի 5-րդ և 6-րդ հարցերը մի փոքր ավելի անձնական են, քան մյուսները, դու կարող ես հարցնել, թե ո՛վ կկամենա կիսվել այս հարցին տված իր պատասխանով: Դու կարող ես նրանց առիթ տալ՝ բացատրելու, թե ինչո՞ւ են նրանք ընտրել այդ պատասխանը, սակայն թույլ մի՛ տուր, որ դա վերածվի իրենց կյանքի փորձառության երկար ինքնակենսագրականի:

5. Այսօրվա կիզակետը. ձախողման պատճառները:

Բացատրի՛ր, որ այսօր մենք քննարկելու ենք ձախողման պատճառները: Մենք կարող ենք համառոտ խոսել այն մասին, թե ինչպես լուծել դրանցից մի քանիսը, սակայն ձախողման այդ մասը մենք ավելի մանրամասն կանցնենք 2-րդ և 3-րդ դասերի ժամանակ:

6. Անցկացրո՛ւ Ա. կետը. «Ձախողման տարբեր տեսակներ» (5-10 բույսեր) Ուսանողի ձեռնարկ, 4-7-րդ էջեր:

Քննարկի՛ր ձախողման տարբեր տեսակները: Օգտագործի՛ր Ուսանողի ձեռնարկի 4-7-րդ էջերի ֆորմատը: Արագ մատնանշի՛ր, որ որոշ ձախողումներ մեղք են, իսկ որոշները՝ ոչ: Այնուհետև նրանք թող թվարկեն ձախողման տարբեր տեսակներ, որոնք համապատասխանում են այդ երեք խոշոր բաժանումներին: Դու կարող ես օգտագործել Ուսուցման ուղեցույց,

Նախագիծ 1-ի 3-րդ հարցի օրինակները, որպեսզի նկարագրես ձախողման այս տարբեր տեսակները:

Ձախողման երեք տեսակներ.

1. Ձախողում, որ մեղք չէ:
2. Ձախողում, որ մեղք է:
3. Ձախողում, որ տանում է մեղքի:

Ուսանողի ձեռնարկ, 4-7-րդ էջեր

7. Ձախողում, որ մեղք է:

Երբ քննարկես ձախողման այն տեսակը, որ մեղք է, համոզվի՛ր, որ նրանք հասկանում են, որ յուրաքանչյուր մեղք ձախողում է՝ Աստծո տեսակետից: Ձախողման վերաբերյալ այս ողջ դասընթացի մեջ մենք հիմնականում խոսելու ենք այն ձախողումների մասին, որոնք համընկնում են «**մեղք**» դասակարգման հետ:

8. Անցկացրո՛ւ Բ. կետը. «Ի՞նչ է անում Աստված, երբ իմ ձախողումը մեղք է» (5-10 րոպե) Ուսանողի ձեռնարկ, 8-10-րդ էջեր:

Հաջորդը քննարկի՛ր, թե Աստված ինչ է անում, երբ ձախողվում ես: Այս թեմայի վերաբերյալ մտքերի համար տե՛ս Ուսանողի ձեռնարկի 8-10 էջերը: Նաև հետ հղո՛ւմ արա Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ի 4-րդ հարցին, որը մենք քննարկել էինք այս դասի սկզբում:

Դասի հենց սկզբից շեշտադրի՛ր, որ Աստված կամենում է քո կյանքի ցանկացած ձախողում օգտագործել որպես քեզ համար աճելու հնարավորություն:

Նաև այս քննարկումը կապի՛ր արդեն քննարկված հատվածի հետ, որտեղ պարզաբանված են ձախողման երեք մեծ բաժինները՝ Ձախողում, որ մեղք չէ, Ձախողում, որ մեղք է, և Ձախողում, որ տանում է մեղքի: Մատնանշի՛ր, որ Աստծո արձագանքը միանգամայն տարբեր կլինի՝ կախված այն բանից, թե ինչ տեսակ ձախողում ես դու ունեցել:

Դասի այս հատվածում մենք ուզում ենք կենտրոնանալ այն հանգամանքի վրա, թե ինչպիսին կլինի Աստծո արձագանքը, եթե քո ձախողումը մեղք է: Մատնանշի՛ր, որ Աստված միշտ տխրում է, երբ մարդը մեղք է գործում, այսինքն՝ ձախողվում է ըստ Աստծո տված չափանիշների ապրելու հարցում:

1

Մատնանշի՛ր, որ երբեմն Աստված բարկանում է մարդկանց վրա, երբ նրանք մեղք են գործում: Դու կարող ես, ցանկության դեպքում, Աստվածաշնչից մեկ կամ երկու օրինակ բերել սրա վերաբերյալ: Գրեթե միշտ, երբ Հիսուսը բարկանում էր մեղք գործած մարդկանց վրա, Նրա բարկությունը ուղղվում էր հատկապես այն մարդկանց, ովքեր ասում էին, որ Աստծո հետևորդներն էին, սակայն գիտակցաբար անտեսում էին Աստծո օրենքները: Գիտակցաբար արված մեղքերը բարկացնում են Աստծուն, քանի որ սովյալ անձնավորությունը գիտի ճշմարտությունը, սակայն որոշում է անտեսել կամ շրջանցել այն:

Անպայման ընդգծի՛ր Ուսանողի ձեռնարկի 9-10-րդ էջերի 5-րդ և 6-րդ կետերում բարձրացված հարցերը. Աստված մեզ ապագայում հույս ունենալու պատճառ է տալիս, և Նա միշտ պատրաստ է օգնել մեզ աճել, երբ մենք ձախողվել ենք:

9. Դու լրիվ ձախողա՞կ ես (2-5 բույե):

Այս կետում մատնանշի՛ր, որ տարբերություն կա ձախողվելու և ինքդ քեզ լրիվ ձախողակ համարելու միջև: Աստված տեսնում է քո բոլոր ձախողումները, սակայն Նա քեզ լրիվ ձախողակ չի համարում: Ոչ էլ դու պետք է քեզ այդպիսին անվանես:

Նշի՛ր, որ Աստված ամեն մեկի մեջ ներուժ (պոտենցիա) է տեսնում: Եփեսացիներին 2:10-ը ասում է, որ Աստված մեզնից յուրաքանչյուրին ստեղծել է լավ գործեր անելու համար: Երբ Հիսուսը տեսավ դիվահարին Գադարացիների երկրում, նա այդ մարդու մեջ ներուժ տեսավ՝ ավետարանիչ լինելու: Մինչդեռ մյուսները նրան տեսնում էին որպես դիվահարված խելագար, մեկը, ումից պետք է վախենային:

10. Հատուկ նշում ուսուցչի համար:

Շատ կարևոր է, որ ուսուցիչը և անձնակազմը հոգևոր մոտեցում և զգացմունքներ ցույց տան նորադարձ քրիստոնյաներին, եթե անգամ նրանք ձախողվում են: Մենք շատ հաճախ բարկություն են արտահայտում, կամ էլ մերժման կամ մեղադրանքի վերաբերմունք ենք ցույց տալիս նրանց հանդեպ, ովքեր ձախողվում են: Հիսուսի վերաբերմունքը շնության մեջ բռնված կնոջ հանդեպ շատ ուսուցանող է մեզ համար, որպեսզի նույն կերպ վերաբերվենք նորադարձ քրիստոնյաների հանդեպ, երբ նրանք ընկնում են: Մեղքն իր իրական անունով կոչիր՝ մեղք, սակայն մարդուն մի՛ դատապարտիր:

11. «Դադարի՛ր մեղադրել ինքդ քեզ», հեղինակ՝ Դեյվիդ Վիլկերսոն:

Այս դասի ծրագրից հետո ուսուցիչների համար նշումների մեջ կա Դեյվիդ Վիլկերսոնի նյութը. «Դադարի՛ր մեղադրել ինքդ քեզ» (տե՛ս Ուսուցչի ձեռնարկի 25-32 էջերը): Դու կարող ես խնդրել քո ուսանողներից մեկին (կամ բոլորին) կարդալ այն: Դու կարող ես նաև նրանց խնդրել գրավոր և/կամ բանավոր շարադրել՝ թե ինչ սովորեցին այդ նյութից:


12. Անցկացրո՛ւ Գ. կետը. «Հասկանալ սեփական խնդիրները»
Ուսանողի ձեռնարկ, 10-12-րդ էջեր:

Դասաժամի մեծ մասը տրամադրի՛ր Գ. կետի քննարկմանը. «Հասկանալ սեփական խնդիրները»: Այս դասի ծրագրի մյուս չորս կետերը (#13-16) ավելի շատ մանրամասներ են հաղորդում դասի այս մասն անցկացնելու վերաբերյալ:

12-րդ էջի աղյուսակը վերցված է Institute in Basic Life Principles-ի սեմինարից: Եթե դու եղել ես այդ սեմինարում, կարող ես ստուգել սեմինարի այդ մասի վերաբերյալ քո գրառումները՝ այս դասի համար նախապատրաստվելիս:

13. Սառցալեռան օրինակը (3-5 րոպե) Ուսանողի ձեռնարկ, էջ 10-րդ:

Դասի այս մասը ներկայացրո՛ւ սառցալեռան օրինակով: Տե՛ս Ուսանողի ձեռնարկի 10-րդ էջն այս օրինակի համար: Գրատախտակի վրա գծի՛ր օվկիանոսի ջրերի գիծը: Այնուհետև գծի՛ր սառցալեռան այն հատվածը, որը ջրերի վրա է:



1

Դու կարող ես սառցալեռան լուսանկար օգտագործել դասի այս հատվածում: Համացանցում կգտնես սառցալեռան հիանալի լուսանկարներ: Այդպիսի լուսանկար կա նաև կայքում. www.iTeenChallenge.org, Օժանդակող հոդվածների, Ուսուցչի նյութերի, Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար դասընթացի՝ Աճել ձախողումների միջոցով բաժնի, Ուսանողական դասացուցակների վերաբերյալ նյութերում: Դու նաև կարող ես գրել «սառցալեռ» բառը կայքի որոնման գործիքի մեջ:

Կարող ես օգտագործել համացանցային որոնման ուրիշ կայքեր, օրինակ՝ Google-ը: Պարզապես գրելով «սառցալեռ» բառը՝ ընտրության տարբեր հնարավորություններ կստանաս: Լուսանկարը քո դասարանի համար Power Point-ի ցուցադրության մեջ ներառելը քեզ կօգնի պատկերավոր ներկայացնել այն միտքը, որ ջրի տակ եղած հատվածը շատ ավելի մեծ է, քան վերնինը:

Հարցրո՛ւ դասարանին, թե սառցալեռան որքան մասն է վերևում՝ համեմատած ջրի տակ եղած հատվածի: Ջրի տակ եղած հատվածը 9-10 անգամ ավելի մեծ է ջրի վրա եղած հատվածից:

Այժմ տե՛ս Ուսանողի ձեռնարկի 12-րդ էջի աղյուսակը: Մենք կօգտագործենք սառցալեռան այս օրինակը՝ այդ աղյուսակի չորս տարբեր բաժինները մատնանշելու համար: Արտաքին խնդիրները նման են սառցալեռան՝ ջրից վերև գտնվող հատվածին: Բոլորն էլ կարող են դրանք տեսնել:

Սառցալեռան՝ ջրի մակերեսի անմիջապես ներքևում գտնվող հատվածը նման է մեր խնդիրների մակերեսային տեսակներին՝ մեր ներքին վերաբերմունքներին: Այսպիսի մտածելակերպը հաճախ մեզ գցում է փորձանքների մեջ: Մեր վերաբերմունքը դրանք բացահայտում է մեր գործողությունների և խոսքերի միջոցով:

Խնդրի աղյուսակը

1

<p>Արտաքին խնդիրներ</p> <p>Մարդիկ կարող են տեսնել այս խնդիրները:</p>	<p>(օրինակներ)</p> <p>վիճաբանել կռվել քննադատել թմրանյութեր ծխախոտ</p>	<p>(օրինակներ)</p> <p>գողություն ստախոսություն եսասիրություն հայհոյանք խմիչք</p>	<p>(օրինակներ)</p> <p>սեռական մեղքեր կիրք համասեռամոլություն լեզբիանություն շնություն արյունապղծություն</p>
<p>Արտաքին պատճառներ</p> <p>ներքին վերաբերմունքներ</p>	<p>(օրինակներ)</p> <p>ըմբոստություն անվստահություն ցածրություն (պակաս կարևոր լինելու զգացողություն)</p>	<p>(օրինակներ)</p> <p>վախ անհանգստություն անապահովություն հպարտություն</p>	<p>(օրինակներ)</p> <p>վիատություն նյարդայնություն հանցանք ամոթ</p>
<p>Արմատական խնդիրներ</p> <p>հիմնական ինքնություն կոնֆլիկտներ Եբրայեցիներին 12:15-17</p>	<p>դատություն (վիրավորվածություն կամ ատելություն)</p>	<p>նյութապաշտական արժեքներ (անցողիկ երևույթների արժևորումը)</p>	<p>անբարոյություն (սեռական մեղքեր)</p>
<p>Արմատական պատճառ</p> <p>Իմ պատասխանն Աստծուն Եսայի 53:6 Եսայի 55:7</p>	<p>Վարվել սեփական ձևով՝ Աստծո ձևով վարվելու փոխարեն: (Չընդունել կամ մերժել այն ցանկությունն ու գորությունը, որ Աստված է տալիս՝ կյանքին Իր ուզած ձևով արձագանքելու համար)</p>		

Այս աղյուսակը հիմնված է այն նյութերի վրա, որոնք վերցված են *Institute in Basic Life Principles*-ի սեմինարի նոթատետրից:

1

14. Ներկայացրո՛ւ մեր խնդիրների վերաբերյալ աղյուսակը
(3-5 բույլե՝ Ուսանողի ձեռնարկ, էջ 12-րդ):

Ասա՛ ուսանողներին, որ բացեն Ուսանողի ձեռնարկի 12-րդ էջը, և արագ անցի՛ր ողջ աղյուսակի վրայով: Նշի՛ր, որ **արտաքին խնդիրներ և արտաքին վերաբերմունքներ** բաժիններում բերված օրինակներն ընդամենը դրանցից մի քանիսն են: Դու կարող ես ավելացնել ուրիշ օրինակներ էլ, որոնք կապ ունեն այն խնդիրների հետ, որոնց քո ուսանողները սովորաբար հանդիպում են:

Ուսանողներին ասա՛, որ կան երեք **արմատական խնդիրներ**: Ցանկացած վերաբերմունք կամ արտաքին խնդիր արմատներով կապ ունի այդ երեք **արմատական խնդիրներից** որևէ մեկի հետ: Այս **արմատական խնդիրները** շատ ավելի մեծ են ու խորը, քան վերաբերմունքները: Դրանք խորը արմատակալած խնդիրներ են, որոնք ազդում են մեր ինքնության վրա: Կարող են մեծապես ազդել այն բանի վրա, թե ինչպես է մարդը մտածում, զգում և վարվում:

Որոշ արտաքին պատճառներ (վերաբերմունքներ, որոնք անմիջապես մակերեսի ներքում են) ուսումնասիրելիս նշի՛ր, որ մի վերաբերմունքը կարող է մեկից ավելի «արմատական խնդիրներ» ունենալ: Այն կարող է ունենալ երկու կամ նույնիսկ աղյուսակում թվարկված բոլոր երեք **արմատական խնդիրները**:

Քո բոլոր խնդիրների և ձախողումների **արմատական պատճառն** աղյուսակում ներկայացված է հետևյալ ամփոփ ձևով. «Վարվել սեփական ձևով՝ Աստծո ձևով վարվելու փոխարեն»: Երկրորդ սահմանումը, որ տրված է, նույն բանն է՝ այլ ձևով՝ ավելի տեխնիկական և ընդգրկուն ասված: Դու կարող ես մատնանշել այդ նախադասության մեջ արտահայտված չորս տարբեր իրողությունները՝ (1) «Չընդունել կամ (2) մերժել (3) այն ցանկությունն ու (4) զորությունը, որ Աստված է տալիս մեզ՝ կյանքին Իր ուզած ձևով արձագանքելու համար»:

15. Տարբեր մակարդակների խնդիրների օրինակներ
(3-5 բույլե՝ Ուսանողի ձեռնարկ, էջ 12-րդ):

Հիմա վերադարձի՛ր աղյուսակին և բե՛ր կյանքից մի քանի օրինակներ՝ ցույց տալով այն հետազիծը, թե ինչպես է խնդիրն արտաքինից խորանում դեպի դրա խորը արմատական պատճառը: Դու կարող ես բացատրել ընդհանուր խնդրի յուրաքանչյուր փուլի կարևորությունը:



Մի ուսանող Թին Չելենջի կենտրոնում 2-3 շաբաթ մնալուց հետո հեռացավ: Երբ մյուս ուսանողներին հարցրին, թե ինչու էր նա հեռացել, նրանք ասացին. «Դե, նա չկարողացավ ծխելը թողնել, դրա համար էլ հեռացավ»: Նրանք ընդամենը տեսել էին արտաքին՝ մակերեսային խնդիրը: Եթե նրանք իրոք ցանկանային իմանալ, թե ինչու էր ծխախոտամուլությունն այդքան ուժեղ համակել նրան, նախ պետք է աշխատեին իմանալ, թե որոնք էին արտաքին վերաբերմունքները, որոնք պատճառ էին հանդիսացել այդ խնդրի համար: Ի միջի այլոց, ծխելու արտաքին խնդիրը կարող է բազմաթիվ տարբեր արտաքին պատճառներ (որից էլ՝ վերաբերմունքներ) ունենալ:

Խնդրի՛ր ուսանողներին, որ ավելի մանրամասն ուսումնասիրեն այս օրինակը: Խնդրի՛ր նրանց գտնել, թե որոնք կարող էին լինել արտաքին պատճառները կամ արմատական պատճառները՝ տվյալ մարդու ծխելու մուլուցքի համար:

Մատնանշի՛ր, որ Աստված ծրագիր ունի՝ օգտագործել մեր խնդիրները որպես աճելու ուղի: Մենք սրա մասին ավելի մանրամասն կխոսենք հաջորդ երեք դասերի ժամանակ:

16. Տարբեր տեսակի խնդիրների օրինակներ (3-5 բույս) Ուսանողի ձեռնարկ, էջ 12-րդ:

Աշխատի՛ր տարբեր օրինակներ բերել այն խնդիրների վերաբերյալ, որոնք ազդում են մարդկանց վրա: Երբեմն մենք կարող ենք շփոթել խնդրի լրջությունը մարդու կյանքում, քանի որ տեսնում ենք հարցի մակերեսային կողմը միայն:

Փոքր ախտանիշները միշտ չէ, որ փոքր խնդիրների մասին են խոսում: Իսկ մեծ ախտանիշները միշտ չէ, որ նշան են մեծ խնդիրների:

Մի քանի տարի առաջ կինս հիշողության կարճատև կորստի ախտանիշ ունեցավ: Մենք բոլորս էլ երբեմն մոռացկոտ ենք լինում, սակայն նրա դեպքում, թվում էր, ավելին էր, քան սովորաբար լինում է: Մի քանի անգամ բժշկին այցելելուց հետո վերջինս նշանակեց գլխուղեղի համակարգչային շերտագրում: Վերջնական ստուգումների արդյունքում նրա ուղեղի ստորին մասում գոլֆի գնդակի մեծության գոյացություն հայտնաբերվեց: Այն հեռացնելու համար ուղեղի վիրահատություն պահանջվեց:

Ոչ բոլոր մարդկանց մոտ է հիշողության կորուստն ուռուցքի հետևանք հանդիսանում: Սակայն այս դեպքում շատ փոքրիկ ախտանիշը շատ լուրջ

1

խնդրի նշան էր կնոջս կյանքում: (Վիրահատությունից հետո հիշողության կորստի նշաններն իսպառ վերացան, և նրա առողջությունը վերականգնվեց):

17. Բացատրի՛ր չորս դասակարգերի միջև եղած կապը (3-5 բույե) Ուսանողի ձեռնարկ, էջ 12-Շ:

Հնարավոր է՝ կարիք լինի անդրադառնալ աղյուսակին և մանրամասնորեն նկարագրել չորս դասակարգումների միջև եղած կապը: Այս հատվածում լավ կլինի մի փոքր ժամանակ հատկացնել՝ այս խնդիրների հետ վարվելու տարբեր ձևերի մասին խոսելու համար:

Սառցալեռան օրինակն օգնում է, որ ցույց տրվի այս խնդիրների հետ վարվելու տարբեր մեթոդներն օգտագործելու հետևանքները: Օրինակ, եթե մարդն ազատվի արտաքին խնդրից, սակայն ջանքեր չգործադրի, որ զբաղվի մյուս երեք ասպարեզների հարցերով, կարող էս վստահ լինել, որ կամ այդ նույն արտաքին խնդիրը, կամ մեկ ուրիշը շուտով ջրի երես դուրս կգա: Եթե կտրես և հեռացնես սառցալեռան վերին հատվածը, սառցալեռան՝ ջրի տակ եղած հատվածը չի մնա սուզված վիճակում, նրա գագաթի 10%-ը նորից դուրս կգա ջրի երես:

18. Անցկացրո՛ւ Դ. կետը. «Ձախողման հետևանքները» (5-10 բույե) Ուսանողի ձեռնարկ, 13-17-րդ էջեր:

Համառոտ անցկացրո՛ւ ձախողման հետևանքները: Ընդգծի՛ր, որ կան ձախողման դրական և բացասական հետևանքներ: Անպայման վերադարձի՛ր ձախողման երեք տեսակներին, որի մասին մենք խոսեցինք դասի սկզբում. Ձախողում, որ մեղք չէ: Ձախողում, որ մեղք է: Ձախողում, որ տանում է մեղքի: Ուսանողի ձեռնարկում թվարկված հետևանքների մեծ մասը վերաբերում է ձախողմանը, որ մեղք է:

Նրանք կարող են նաև կիսվել իրենց պատասխաններով, որ տվել են Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինում, որտեղ պետք է թվարկելին ձախողման դրական և բացասական հետևանքները:

Մենք ձախողման հետևանքների մասին ավելի ընդարձակ կխոսենք այս դասընթացի հաջորդ դասերի ժամանակ:

19. Անձնական կիրառություն (5-10 րոպե):

Այսօրվա դասի անձնական կիրառության համար խնդրի՛ր ուսանողներից յուրաքանչյուրին՝ մտածել այն խնդիրների մասին, որոնք ներկայումս պատճառ են դառնում նրանց ձախողման համար:

1. Թող ուսանողներից ամեն մեկը գրի մեկ արտաքին խնդիր, որը նա ուզում է հաղթահարել:
2. Խնդրի՛ր նրանց գրել, թե ինչն է, նրանց կարծիքով, այդ խնդրի արտաքին պատճառը (ներքին վերաբերմունքը):
3. Թող նրանք գրեն, թե երեք արմատական խնդիրներից որի՛ հետ է այն ամենաշատը կապված:
4. Եթե նրանք ժամանակ ունեն, ապա կարող են գրել, թե ինչպես է այդ արմատական պատճառը համապատասխանում այս խնդրին: Թող մեկ կամ երկու օրինակ բերեն, թե ինչպես են նրանք «վարվել իրենց ձևով»՝ այս խնդրի լուծման համար:
5. Քաջալերի՛ր նրանց, որ գրեն, թե որն է Աստծո ձևը՝ այդ խնդրի լուծման համար:

Դու կարող ես սա գրավոր հանձնարարություն դարձնել, որպեսզի նրանք ներկայացնեն հաջորդ դասին, եթե բավարար ժամանակ չունեն դասարանում այն ավարտելու համար:

Եթե օրվա ընթացքում ժամանակ ունենաս, քեզ համար լավ կլինի յուրաքանչյուր ուսանողի հետ անձամբ քննարկես նրանց պատասխաններն այս թեմային: Եթե ձեր կենտրոնում ունեք *Անձնական ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացի դասերը, դու կարող ես օրվա ընթացքում այս գրված նախագիծը քննարկել յուրաքանչյուր ուսանողի հետ:

Մի՛ գարմացիր, եթե նրանք դժվարանան ճշգրտորեն զանազանել արտաքին պատճառները և արմատական խնդիրները, որոնք վերաբերում են նրանց արտաքին խնդիրներին: Հնարավոր է՝ մեկից ավելի ներքին վերաբերմունքներ լինեն, որոնք կապ ունենան նրանց խնդրի հետ:

1

20. Հանձնարարություններ:

- Ա. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 1-ինի՝ *«Առաջին հայացք ձախողմանը»* բաժնի համար:
- Բ. Բացատրի՛ր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդը՝ *«Ներում խնդրել և փոխհատուցել»* թեմայի վերաբերյալ:
- Գ. Թող քո ուսանողները կարդան Ուսանողի ձեռնարկի Գլուխ 2-րդը, որպեսզի պատրաստ լինեն հաջորդ դասաժամին այն քննարկելու համար:

21. Դասի գնահատում:

- Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Պատարի՛ր ինքդ քեզ մեղադրել: Հեղինակ՝ Դեյվիդ Վիլկերսոն

1

Ես այնքան եմ ամաչում, երբ հիշում եմ իմ վաղ տարիների ծառայությունը, քանի որ այնքան անկեղծ մարդկանց էի մեղադրում: Իմ մտադրությունը դրական էր, հաճախ նաև իմ նախանձավորությունն էր անկեղծ և մղված դեպի բարին: Սակայն ինչքան շատ մարդկանց էի ես սուսկալի մեղադրանքի տակ դնում, քանի որ նրանք չէին համապատասխանում սրբության իմ պատկերացմանը:

Տարիներ առաջ ես քարոզում էի կանանց շպարվելուն հակառակ: Քարոզում էի կարճ զգեստների դեմ: Ես դատապարտում էի ցանկացած բան, որ իմ «օրինականությունների» ցուցակից դուրս էր: Անցյալում շատ հզոր քարոզներ եմ տվել՝ դատապարտելով հոմոսեքսուալիստներին, ամուսնալուծվածներին, հարբեցողներին և մեղքի մեջ ապրողներին: Ես շարունակում եմ խորապես համոզված մնալ, որ ծառայողները պետք է քրիստոնյաների կյանքում մեղքի հարձակումներին և մեղքի մեջ ապրելուն դեմ խոսեն: Ինձ հիմա էլ դուր չի գալիս հոգևոր կանանց փողոցայինի նման ներկված տեսնել: Ինձ հիմա էլ դուր չեն գալիս կարճ զգեստները: Ես այսօր էլ, ավելին քան երբևէ, համոզված եմ, որ Աստված ատում է ամուսնալուծությունը: Ես հիմա էլ այն մտքի ջատագովն եմ, որ Աստված աչք չի փակի ոչ մի տեսակի մեղքի կամ զիջողության հանդեպ:

Սակայն վերջին շրջանում Աստված մղում է ինձ՝ դադարել մեղադրել մարդկանց, ովքեր ձախողվել են, և դրա փոխարեն նրանց քարոզել սիրո և հաշտության պատգամ: Ինչո՞ւ. քանի որ եկեղեցին այսօր լի է քրիստոնյաներով, ովքեր բեռնավորված են հանցանքի և մեղադրանքի լեռներով: Նրանք այլևս կարիք չունեն դատաստանի և վախի վերաբերյալ պատգամների, նրանք արդեն բավականաչափ լցված են վախով ու անհանգստությամբ: Նրանք կարիք չունեն, որ քարոզիչն ասի, թե որքան զայրացած է Աստված նրանց վրա: Նրանք առանց այդ էլ սաստիկ վախենում են Աստծո ցասումից: Նրանք կարիք ունեն լսելու այն պատգամը, որ Հովհաննեսն էր քարոզում.

«Որովհետև Աստված Իր Որդուն չուղարկեց աշխարհ, որ աշխարհը դատի, այլ՝ որ աշխարհը Նրանով փրկվի» (Հովհաննես 3:17):

Հիսուսը շնացող կնոջն ասաց. «Ոչ էլ Ես եմ քեզ մեղադրում: Գնա՛ և սրանից հետո այլևս մեղք մի՛ գործիր»: Ինչո՞ւ, ուրեմն, ես և իմ ծառայակիցները չենք կարող նույն սիրո պատգամը քարոզել հազարավոր ու հազարավոր այն մարդկանց, ովքեր ապրում են շնության մեղքի վախի մեջ: Ինչո՞ւ ենք մենք դեռևս մեղադրում ամուսնալուծված քրիստոնյաներին, ովքեր նորից են ամուսնանում, երբ նրանք, իրոք, ապաշխարել են և որոշում ընդունել՝ այլևս նույն մեղքը չկրկնել:

1

Վերջերս մի տասը տարեկան պատանի ինձ կանգնեցրեց ավետարանչական ժողովից հետո և աղերսեց լսել իր կյանքի պատմությունը: Նա հիստերիայի մեջ էր: «Մայրս ու հայրս բաժանվեցին երկու տարի առաջ: Մայրս լավ քրիստոնյա է, ամուսնացավ մի հիանալի քրիստոնյա տղամարդու հետ: Ես ապրում եմ մորս և խորթ հորս հետ և շատ եմ սիրում նրանց: Սակայն մայրս միշտ տխուր է և շարունակ լալիս է, քանի որ մի ծառայող նրան ասել է, որ մեղքի մեջ է ապրում: Մայրս դժոխք կգնա այն բանի համար, որ ամուսնալուծվել է և ամուսնացել մեկ այլ ամուսնալուծված տղամարդու հետ: Ես այնքան շփոթված եմ, քանի որ նրանք երկուսն էլ այնքան լավ քրիստոնյաներ են»:

Ես այդ տղային ասացի այն, ինչ ուզում եմ ասել ողջ աշխարհին. «Եթե նա ամուսնալուծվել է իր շնության պատճառով և նորից ամուսնացել, ուրեմն ապրում է շնության մեջ: Աստված ատում է շնությունը: Սակայն եթե նա ապաշխարել է, Աստված ներում է նրան, և նա ամեն բան նորից է սկսում նորածին քրիստոնյայի նման: Նա մեղքի մեջ չի ապրում, երբ Քրիստոսի արյան տակ է և ներված է: Նա կարող է նոր կյանք սկսել առանց դատապարտության և մեղավորության զգացողության: Եթե Հիսուսը ներում է մարդասպանությունը, գողությունը, ստությունը, թալանը և այլն, նա նաև ներում է շնությունը»:

Ինձ զարմացնում է այն, որ մենք՝ ծառայողներս, այնքան պատրաստակամ ենք գնալ Աֆրիկա և ներում քարոզել «հեթանոսներին», սակայն այնքան անպատրաստակամ ենք՝ ներում քարոզել քրիստոնյաներին տանը: Մի ծառայող ինձ բողոքեց բոլոր ամուսնալուծված, կոտրված և նեղված մարդկանց համար իր նոր ծառայության մեջ: Ես մտածեցի. «Եղբա՛յրս, դու պետք է Աստծուն շնորհակալ լինես, որ քեզ դրել է այդպիսի պտղաբեր դաշտի մեջ: Դրանք այն մարդիկ են, որոնք քո կարիքն ամենաշատն ունեն: Նրանք Աստծո մարդու կարիք ունեն, որը նրանց ցույց կտա, թե ինչպես ամեն բան նորից սկսեն»:

Ես երջանիկ ամուսնություն ունեցող մարդ եմ, և Աստծո օգնությամբ ես ու կինս՝ Գվենը, միշտ միասին կլինենք մինչև մահ: Եվ ես ամբողջ սրտով զգվում եմ ամուսնալուծությունից: Սակայն ինձ անհանգստացնում է այն, որ եկեղեցին ուզում է «դուրս գրել» բոլոր նրանց, ովքեր սխալ են թույլ տվել: Եկեղեցին միաթարություն և սփոփանք է առաջարկում բոլոր նրանց, ովքեր «անմեղ զոհեր» են: Կանանց, որոնց խաբել են: Ամուսիններին, որոնց կանայք դավաճանել են: Բոլոր երեխաներին, որոնք տուժել են այդ բաժանությունների պատճառով:

Իսկ ինչ ասենք այն բոլոր «հանցավորների» համար. մեղավորների, ովքեր նեղացրել են իրենց անմեղ սիրելիներին: Եթե այսօր երեք ամուսնություններից մեկը ավարտվում է ամուսնալուծությամբ, նշանակում է միլիոնավոր ամուսիններ ու կանայք «հանցավոր կողմ» են հանդիսանում: Ես չեմ ուզում անտեսել անգամ

հանցավորներին: Ավագակը, որին Հիսուսը ներեց Գողգոթայում, անմեղ զոհ չէր: Ո՛չ: Նա հանցավոր էր. նա **հանցագործ էր**: Սակայն իր հանցանքի մեջ հավատով դիմեց Քրիստոսին: Նա ներում ստացավ և Քրիստոսի հետ մտավ Աստծո փառքի մեջ:

Հոմոսեքսուալների և լեզբիանների մասին, նաև՝ հարբեցողների: Նրանց մեղադրելը որևէ դրական արդյունք կտա՞: Ո՛չ: Հազար անգամ՝ ո՛չ: Քրիստոսը չեկավ այս մեղավորներին մեղադրելու, այլ՝ սիրով նրանց փրկելու համար: Աստված ատում է հոմոսեքսուալ վարքագիծը, բայց Նա չի զզվում մարդկանցից, ովքեր չեն ապրում ըստ իրենց արական և իգական դերերի:

Անցյալ շաբաթ տասնինը տարեկան մի հաճելի բուժքույր ինձ կանգնեցրեց ավետարանչությունից հետո: Հեծկլտալով նա մի խղճալի խոստովանություն արեց. «Պարո՛ն Վիլկերսոն, ես լեզբիան եմ: Ես ինձ այնքան կեղտոտ ու անմաքուր եմ զգում: Եկեղեցին, որտեղ ես հաճախում էի, ինձ ասաց, որ այլևս չգնամ իրենց մոտ: Եկեղեցու ծառայողն ասաց, որ չի կարող թույլ տալ, որ հանկարծ ես մյուսներին էլ համայնքում գայթակղեմ: Ինձ թվում է՝ իմ միակ ելքն ինքնասպանությունն է: Ես կատարյալ վախի ու դատապարտության մեջ եմ ապրում: Ի՞նչ անեմ, ինքնասպա՞ն լինեմ, որպեսզի խաղաղություն գտնեմ»:

Նա հետ քաշվեց ինձնից, կարծես այնքան կեղտոտ էր, որ չէր կարող մնալ իմ ներկայության մեջ: Ես հարցրի նրան, թե արդյոք նա դեռ սիրո՞ւմ է Հիսուսին: «Օ՛, այո՛», - պատասխանեց նա: - «Իմ սիրտն ամեն ժամ Նրան է աղաղակում: Ես Քրիստոսին սիրում եմ իմ ողջ էությամբ: Սակայն կապված եմ այս սոսկալի սովորությամբ»:

Պետք էր տեսնել, թե նրա երեսը ինչ գեղեցիկ փայլեց, երբ ես ասացի, թե ինչքան շատ է Աստված նրան սիրում նույնիսկ իր պայքարների մեջ: Ես նրան ասացի. «Մի՛ հանձնվիր նորից մեղքին: Աստված գիժ է քաշում հենց այնտեղ, որտեղ դու կանգնած ես: Որևէ քայլ դեպի Նրան՝ համարվում է արդարություն: Որևէ քայլ այդ գծից դեպի հետ՝ հեռու Նրանից, մեղք է: Երբ մենք մոտենում ենք Նրան, Նա էլ մոտենում է մեզ: **Պահի՛ր քո հոգևոր առաջընթացը: Շարունակի՛ր սիրել Հիսուսին, եթե անգամ դեռևս վերջնական հաղթություն չունես: Ընդունի՛ր Նրա ամենօրյա ներումը: Ապրի՛ր ամեն օրը: Համոզվա՛ծ եղիք, որ Հիսուսը սիրում է մեղավորներին, այնպես որ Նա քեզ էլ է սիրում»:**

Նա թեթևացած ժպտաց և ասաց. «Պարո՛ն Վիլկերսոն, Դուք առաջին ծառայողն եք, որ ինձ հույսի շող առաջարկեց: Սրտիս խորքում ես գիտեմ. Նա դեռ սիրում է ինձ և կազատագրի այս կապանքից: Բայց ես այնքան խիստ եմ

1

դատապարտվել բոլորի կողմից: Շնորհակալություն՝ նաև Ձեր տված հույսի և սիրո ուղերձի համար»:

Այս ուղերձն ընթերցողին. դու հիմա մեղադրանքի մեջ ես ապրում: Դու Տիրոջ առաջ մե՞ դք ես գործել: Վշտացրե՞լ ես Սուրբ Հոգուն քո կյանքում: Դու պարտվո՞ւմ ես քեզնից ուժեղ փորձության դեմ պայքարելիս:

Այն, ինչ դու պետք է անես, Աստծո Խոսքը փնտրելն է, և դու կհայտնաբերես Աստծո շնորհը, սերն ու անվերջանալի կարեկցանքը: Դավիթն ասում է.

«Եթե Դու, Տե՛ր, անօրինությունները հիշես, ո՞վ կարող է դեմ կանգնել: Բայց Քեզ մոտ ներում կա, որպեսզի Քեզնից վախենան» (Մաղմոս 130:3-4):

Մի անգամ իմ գրասենյակ եկավ մի այլայլված կին և հեծկլտալով ասաց. «Պարո՛ն՝ Վիկերսոն, մի ժամանակ Աստված ինձ ազատել էր հարբեցողությունից: Բայց վերջերս ես հուսահատության մեջ ընկա և նորից խմեցի: Հիմա ես չեմ կարողանում կանգ առնել: Ես այնքան վատ եմ վարվել Տիրոջ հետ, միակ բանը, որ ես հիմա կարող եմ անել, հուսահատվելն է: Այն ամենից հետո, ինչ Նա արեց ինձ համար, մտածելը միայն, թե ինչպես ես վարվեցի Նրա հանդեպ, հուսահատեցնում է: Անօգուտ է. ես այլևս երբեք չեմ կարող այդ ամենը վերադարձնել»:

Համոզված եմ, որ մենք հոգևոր կյանքում ավելի շատ ենք սխալներ անում, քան կարծում ենք: Նաև կա դիվային ռազմավարություն. այդ սխալներից պարիսպներ կառուցել՝ մեզ Աստծուց հեռացնելու համար: Մակայն մենք չպետք է թույլ տանք, որ մեր ժամանակավոր ձախողումները մնայուն դժոխքի վերածվեն:

Կարծում եմ՝ միլիոնավոր այնպիսի նավաստիներ կան, ինչպիսին էր այն երիտասարդ նավաստին, որ եկել էր ինձ մոտ: Արցունքներն աչքերին նա ասաց. «Իմ հայրը եկեղեցական ծառայող է, սակայն ես նրան այնքան խորն եմ վշտացրել: Ես այնքան թույլ եմ: Վախենում եմ, որ այլևս երբեք չեմ կարողանա ծառայել Տիրոջն այնպես, ինչպես պետք է: Ես այնքան հեշտ եմ ընկնում մեղքի մեջ»:

Այսպիսի խոստովանությունները ողբերգական են: Մակայն ես մեծ քաջալերանք գտա այն փաստի մեջ, որ աստվածաշնչյան շատ տղամարդիկ ու կանայք նույնպես ձախողումներ և պարտություններ են ունեցել:

Դու Մովսեսին ձախողակ կհամարեի՞ր: Դժվար թե: Նա Իսրայելի համար այնպիսին էր, ինչպիսին Վաշինգտոնն ու Լինքոլնը միասին վերցրած՝ Ամերիկայի համար, և այսպես՝ շատ օրինակներ: Մակայն ավելի մոտ ծանոթանանք այդ մեծ օրենսդրի կյանքին: Նրա կարիերան սկսվեց մարդասպանությամբ, որին հետևեց քառասուն տարվա փախուստն արդարադատությունից:

Մովսեսը վախ և անհավատություն ցուցաբերեց: Երբ Աստված նրան կանչեց, որ դուրս բերի Իսրայելին ստրկությունից, նա ասաց. «Եվ Մովսեսն ասաց Տիրոջը. «Օ՛հ, Տե՛ր իմ, ես ճարտարախոս չեմ, ո՛չ մինչև հիմա, ո՛չ էլ Քո՝ ծառայիդ հետ խոսելուց հետո, այլ ես ծանրախոս ու ծանրալեզու եմ»: Եվ նա ասաց. «Օ՛հ Տե՛ր իմ, աղաչում եմ, ուղարկի՛ր՝ ում ձեռքով ուզում ես ուղարկել» (Ելից 4:10,13): Սա բարկացրեց Աստծուն (4:14): Իր ողջ կյանքի ընթացքում Մովսեսը փափագում էր

մտնել Խոստացյալ երկիրը, սակայն նրա սխալը նրան խանգարեց դա անել: Այս ամենով հանդերձ՝ Աստված Եբրայեցիներին 3:1,2-ում Մովսեսի հավատարմությունը համեմատում է Հիսուսի հավատարմության հետ: Նրա ձախողումները նրան դուրս չարեցին Աստծո Ջորավորների ցուցակից:

Մենք Հակոբի մասին հիշում ենք՝ որպես աղոթքի հզոր մարտիկի, ով մենամարտեց Աստծո հրեշտակի հետ ու հաղթեց: Հակոբը տեսիլք տեսավ, թե ինչպես էին հրեշտակները բարձրանում ու իջնում երկնքից: Բայց և այնպես, այս մարդու կյանքը լի էր աղաղակող ձախողումներով, և Մուրբ Գիրքը դրանցից ոչ մեկը չի թաքցնում:

Հակոբը խաբեց իր կույր հորը և գողացավ եղբոր ժառանգությունը:

Ամուսնացել էր նա, սակայն չէր սիրում իր կնոջը՝ Լիային, այն պատճառով, որ իր սրտում գաղտնի սեր էր փայփայում նրա քրոջ՝ Ռաքելի հանդեպ: Նա՝ որպես ամուսին, չընդունեց իր պատասխանատվությունը: Ամեն անգամ արու գավակ ունենալիս Լիան շարունակ ասում էր. «Եվ նորից հղիացավ, մի որդի ծնեց և ասաց. «Հիմա արդեն իմ ամուսինն ինձ հետ կմիանա, որովհետև երեք որդի ծնեցի նրա համար». այս պատճառով նրա անունը Ղևի (միացած) դրեց» (Ծննդոց 29:34): Սակայն իրականությունն այն էր, որ Հակոբն ասում էր նրան:

Ահա մի մարդ, ով կաշկանդված էր խաբեության, ստի, գողության, անհավատարմության և բազմակնության սարդոստայնի մեջ: Այնուամենայնիվ, մենք շարունակում ենք երկրպագել Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծուն:

Դավիթ թագավորը՝ սաղմոսերգու և հզոր զորավար, սքանչանում էր Աստծո օրենքով և իրեն դրսևորում էր որպես արդար մարդ, ով մեղավորների ճանապարհով չէր քայլում: Սակայն ինչքա՛ն ցնցող են Աստծո այս մեծ մարդու թուլությունները: Խլելով Բերսաբեին իր ամուսնուց՝ Ուրիայից, նա այդ ոչինչ չկասկածող մարդուն ուղարկեց մահանալու իր բանակի առաջին գծում: Նախան մարգարեն հայտարարեց, որ նրա կրկնակի մեղքը Տիրոջ թշնամիներին չարախոսելու մեծ առիթ էր տվել:

Պատկերացրո՛ւ այդ մեծ թագավորին՝ կանգնած իր մահացած ապօրինի երեխայի դիակի մոտ: Մի կողմում՝ ուրիշից խլած կինը, իսկ մյուս կողմում՝ թշնամիներով լցված աշխարհը, ովքեր հայհոյախոսում էին Աստծո դեմ այդ տխրահռչակ մեղքերի պատճառով: Դավիթն այստեղ կատարյալ ձախողակ մարդու տպավորություն է թողնում: Բայց և այնպես, Աստված Դավթին Իր սրտի համեմատ մարդ է անվանում (Ա Թագավորաց 13:14): Նա օրհնում է նաև մարդասպան Մովսեսին և խաբեբա Հակոբին, որովհետև նրանք սովորեցին օգուտ քաղել իրենց ձախողումներից և առաջ գնալ հաղթության մեջ:

Եթե քո ձախողումները հուսահատեցրել են քեզ, ես այդ առումով լավ նորություն ունեմ: Ոչ ոք Աստծո թագավորությանն այնքան մոտ չէ, որքան այն մարդիկ, ովքեր կարող են նայել պարտության աչքերի մեջ, ովքեր սովորում են դիմակայել դրան և ընդառաջ են գնում խաղաղությանն ու հաղթական կյանքին: Ահա՛ դա անելու ծրագիրը.

1

1. Մի՛ վախեցիր ձախողումից:

Վախի արձագանքը, թվում է, ինքնաբերաբար է լինում: Երբ Ադամը մեղք գործեց, փորձեց թաքնվել Աստծուց: Երբ Պետրոսն ուրացավ Քրիստոսին, վախեցավ Նրա երեսին նայել: Երբ Հովնանը մերժեց Նինվեում քարոզել, վախը նրան մղեց՝ Տիրոջ ներկայությունից փախչել դեպի օվկիանոս:

Սակայն Աստված ինձ մի ճշմարտություն ցույց տվեց, որն ինձ հաճախ է օգնել, այն է՝ **շատ անգամ ձախողման վախն ավելի վատ է, քան ձախողումը:** Ադամը, Հովնանը և Պետրոսն Աստծուց փախչում էին ոչ թե այն պատճառով, որ կորցրել էին իրենց սերը՝ Նրա հանդեպ, այլ վախենում էին, որ Նա բարկացած էր իրենց վրա այնքան, որ չէր հասկանա իրենց: Սատանան այս տեսակի վախն օգտագործում է, որպեսզի համոզի, որ փորձելն անօգուտ է:

Այդ հին «եղբայրների չարախոսն» անգղի նման սպասում է, թե երբ ես դու ինչ-որ հարցում ձախողվելու: Դրանից հետո նա օգտագործում է դժոխային բոլոր ստերը՝ քեզ հուսահատեցնելու համար, նաև համոզելու, որ Աստված չափազանց սուրբ է, կամ դու չափազանց մեղավոր ես, որպեսզի հետ դառնաս: Նա վախեցնում է քեզ, որ դու այնքան էլ հասուն չես, կամ՝ որ դու երբևէ չես հաղթահարի քո ձախողումը:

Քառասուն տարի պահանջվեց Մովսեսին վախից ազատելու և Աստծո ծրագրի համար նրան պիտանի դարձնելու համար: Այդ ընթացքում ազատագրման Աստծո ծրագիրը պետք է գրեթե կես դար հապաղեր, քանի դեռ մի անձնավորություն սովորում էր առերեսվել իր ձախողման հետ: Եթե Մովսեսը, Հակոբը կամ Դավիթը սովորեին իրենց ձախողումներին, մենք, հնարավոր է, ոչինչ չիմանայինք այդ մարդկանց հետագայի մասին: Այնուամենայնիվ, Մովսեսը բարձրացավ՝ դառնալով Աստծո մեծագույն հերոսներից մեկը: Հակոբն առերեսվեց իր մեղքերի հետ, հաշտվեց եղբոր հետ, որին խաբել էր, և հասավ հաղթության նոր բարձունքների: Դավիթը վազեց Աստծո տուն, բռնեց գոհասեղանի եղջյուրներից, ներում ու խաղաղություն գտավ և վերադարձավ իր հրաշալի վիճակին: Հովնանն ուղղեց իր քայլերը, արեց այն, ինչ սկզբում հրաժարվում էր անել, և այդ ամբողջ քաղաք-պետությունը բերեց ապաշխարության և ազատագրման: Պետրոսը բարձրացավ ուրացման մոխիրներից, որ առաջնորդի Պենտեկոստեի եկեղեցին:

2. Չնայած ձախողմանը՝ շարունակի՛ր առաջ գնալ: Մարդիկ միշտ իրենց ձախողումներից հետո են անում մեծագույն գործերն Աստծո համար: Քսան տարի առաջ ես նստած էի իմ փոքրիկ ավտոմեքենայի մեջ և արտասվում էի. «Սարսափելի ձախողում», - մտածում էի: Ինձ առանց այլևայլության դուրս էին շարտել դատարանից այն բանից հետո, երբ ես կարծում էի, որ Աստված է ինձ առաջնորդում՝ վկայել յոթ երիտասարդ մարդասպաններին: Ես իմ լուսանկարը տեսա թերթի էջերին՝ մակագրված. «ԱՍՏՎԱԾՄԱՇՈՒՆՉԸ ԹԱՓԱՆԱՐՈՂ ՔԱՐՈՋԻՉԸ ԽԱՆԳԱՐՈՒՄ Է ՄԱՐԴԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆԸ»: Իմ փորձը՝ հնազանդվելու Աստծուն և օգնելու այդ խուլիզաններին, թվում էր՝ ավարտվել էր սոսկալի ձախողումով:

Ես ցնցվում եմ՝ մտածելով, թե ինչքան մեծ օրհնություն կկորցնեի, եթե այդ խավար ժամին հանձնվեի: Ինչքան ուրախ եմ այսօր, որ Աստված ինձ սովորեցրեց դեմ կանգնել իմ ձախողմանը և ընդառաջ գնալ հաջորդ քայլին, որ Նա պատրաստել էր ինձ համար:

Ես գիտեմ Աստծո երկու հրաշալի անձնավորության, ովքեր ծառայել են հազարավոր մարդկանց, որոնք ընկել էին այն նույն մեղքի մեջ, ինչ Դավիթը գործեց Բերսաբեի հետ: Նրանցից մեկը որոշեց, որ այլևս չի կարող առաջ գնալ: Այսօր նա հարբում և հայհոյում է այն Քրիստոսին, որի մասին ինքը մի ժամանակ քարոզում էր: Մյուսն ապաշխարեց և ամեն բան նորից սկսեց: Հիմա նա առաջնորդում է միջազգային միսիոներական մի ծրագիր, որով հազարավորներին պատմում է Քրիստոսի մասին: Նրա ձախողումը մնաց հետևում: Նա շարունակում է առաջ շարժվել:

Թմրամոլների և դժվար դաստիարակվողների հետ իմ ծառայության ժամանակ ես նկատել եմ, որ այն մարդիկ (նրանց մեծ մասը), ովքեր նորից են ընկնում իրենց հին սովորությունների մեջ, մյուսներից ավելի ուժեղ են դառնում, երբ դեմ են կանգնում իրենց ձախողումներին և վերադառնում են Տիրոջ մոտ: Նրանք ավելի խորն են գիտակցում սատանայի գործությունը և ամբողջությամբ մերժում են մարմնի հանդեպ վստահությունը:

3. Չնայած ձախողմանը՝ շարունակի՛ր երկրպագել: Մովսեսի համար հաղթության մեջ մնալու միայն մեկ ճանապարհ կար, քանի որ նա ուներ ճիշտ այնպիսի բնավորություն, որ ունեն մեզնից շատերն այսօր: Նա շարունակ հաղորդակցվում էր Տիրոջ հետ. «Եվ Տերը խոսում էր Մովսեսի հետ դեմ առ դեմ, ինչպես մի մարդ իր բարեկամի հետ կխոսի. Ապա Մովսեսը բանակ էր վերադառնում, բայց նրան սպասարկող երիտասարդ Հետուն՝ Նավեի որդին, խորանից չէր հեռանում» (Ելից 33:11): Մովսեսը պահպանում էր մտերիմ ընկերությունը Տիրոջ հետ: Ես կարծում եմ, որ սրբության գաղտնիքը շատ պարզ է. մտերիմ մնալ Հիսուսի հետ: Հայացքդ հառի՛ր Նրա դեմքին, մինչև դու էլ կնմանվես Նրան, ում նայում ես:

Մի երեկո հիստերիայի մեջ ընկած մի կին ինձ կանգնեցրեց և սարսափելի խոստովանություն դուրս տվեց: Բռնելով և ուժգին քաշելով հագուստիս թևքը (ես մտածեցի, թե նա կպատռի այն)՝ նա ասաց. «Պարո՛ն Վիլկերսոն, ես հիմա ապրում եմ իմ կյանքի ամենախավար ժամանակը: Չգիտեմ՝ որ կողմ թեքվեմ: Ամուսինս թողել է ինձ, և դա ամբողջությամբ իմ պատճառով: Երբ մտածում եմ, թե ինչքան սխալներ եմ գործել Աստծո և ընտանիքիս առաջ, գրեթե չեմ կարողանում գիշերները քնել: Եվ ի՞նչ եմ ես հիմա անելու»:

Ես զգացի, որ պետք է նրան ասեմ. «Բարեկա՛մա, ձեռքերդ վե՛ր բարձրացրու հենց հիմա, փողոցի այս անկյունում և սկսի՛ր երկրպագել Տիրոջը: Ասա՛ Նրան, որ դու գիտես, որ ձախողակ ես, սակայն այնքան շատ ես Նրան սիրում: Իսկ հետո տո՛ւն գնա ու ծնկի՛ արի: Աստծուց ոչ մի բան մի՛ խնդրիր: Ընդամենը բարձրացրո՛ւ ձեռքերդ ու սիրտդ և երկրպագի՛ր Նրան»:

1

Ես այդ կնոջը թողեցի փողոցի անկյունում կանգնած: Ձեռքերը դեպի երկինք պարզած, արցունքներն այտերին՝ նա փառաբանում էր Տիրոջը՝ կանխավայելելով այն հաղթանակը, որ սկսում էր գալ դեպի իր կյանք:

Հիմա թո՛ւյլ տուր խոսել քո ձախողման մասին: Դու խնդիրնե՞ր ունես տանը: Ջզվելի սովորություննե՞ր ունես, որոնք այնքան ուժգին են կաշկանդել քեզ, որ, թվում է, չես կարող ազատվել: Դու տանջվո՞ւմ ես հոգով ու մտքով: Աստված ինչ-որ բա՞ն է ասել քեզ անելու, որ դու չես կարողացել անել: Աստծո կամքից դո՞ւրս ես գտնվում: Քո անցյալի հիշողությունները՝ թե՛ ո՛վ էիր դու մի ժամանակ, տանջո՞ւմ են քեզ, կամ գուցե ա՞յն, թե՛ ո՛վ կարող էիր լինել:

**Ուրեմն, քո բոլոր ձախողումներով հանդերձ, երկրպագի՛ր Տիրոջը:
Փառաբանի՛ր Նրան: Մեծարի՛ր Նրան:**

Գուցե սա չափազանց պարզ է թվում, սակայն ձախողումը հաղթահարելու ճանապարհը բավականին հեշտ է թե՛ փոքրերի, թե՛ մեծերի համար: Քրիստոսն ասում է. «Բոլորը, ում Հայրն Ինձ է տալիս, Ինձ պիտի գան, և ով որ Ինձ գա, Ես նրան երբեք դուրս պիտի չհանեմ» (Հովհաննես 6:37):

«Իսկ եթե Ես Աստծո Հոգով եմ հանում դներին, ուրեմն Աստծո թագավորությունը եկել է ձեզ վրա» (Մատթեոս 12:28):

Ձախողումներից մի՛ վախեցիր: Շարունակի՛ր առաջ գնալ՝ անկախ ամեն ինչից: Պաշտի՛ր Աստծուն, մինչև հաղթությունը գա: Շարունակի՛ր քայլել առաջ և դու դեռ կտեսնես քո կյանքի լավագույն ժամանակը:

Լրացուցիչ, վաճառքի ենթակա օրինակների համար դիմել Դեյվիդ Վիլկերսոնին: Route 1, Box 80, Lindale, Texas 75771:

Դաս 2.

Ձախողումից վերականգնվելու առաջին քայլերը:

1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:

Ես Աստծո օգնության կարիքն ունեմ, որպեսզի ճիշտ քայլեր անեմ ձախողումից վերականգնվելու համար:

2. Բանալի համար. Սաղմոս 32:8-9

«Քեզ խրատելու եմ ու սովորեցնելու եմ քեզ գնալուդ ճամփան. Իմ աչքերով առաջնորդելու եմ քեզ: Մի՛ եղեք ձիու կամ ջորու պես, որոնք հասկացողություն չունեն, որոնց բերանը պետք է սանձով ու պախուրցով կապես, որպեսզի քեզ չմոտենան»:

3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսանողի ձեռնարկի Գլուխ 2-րդը համընթաց է այս դասին: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի՝ «Ներում խնդրել և փոխհատուցել» բաժինը համընթաց է այս դասի հետ:

4. Փոխհատուցում. ուսուցչի նախապատրաստություն:

Ուսանողի ձեռնարկի 32-38-րդ էջերը խոսում են փոխհատուցման թեմայի վերաբերյալ: Դու կարող ես մի ամբողջ դասաժամ հատկացնել այս թեմային՝ կախված այս հարցի վերաբերյալ քո ուսանողների հետաքրքրությունից: Եթե քո ուսանողների մեջ շատ կան ոչ-ճշմարիտ քրիստոնյաներ, կամ նորադարձ քրիստոնյաներ, դու կարող ես հիմա շատ համառոտ անցնել այս թեման՝ հետագայի համար թողնելով դրա ավելի մանրամասն քննարկումը: Փոխհատուցման թեման կարող է շատ հակասական լինել, և որոշ նորադարձ քրիստոնյաների համար այն կարող է չափազանց դժվարհասկանալի լինել:

5. Դասի ջերմացման գործողություն (3-5 րոպե):

Այսօրվա դասը սկսի՛ր սառցալեռան օրինակով, որպեսզի ցույց տաս «Հասկանալ սեփական խնդիրները» աղյուսակի չորս բաժինները: Նայիր Ուսուցչի ձեռնարկի 10 և 12 էջերը:

Նաև վերանայի՝ ր ձախողման երեք հիմնական դասակարգումները.

1. Ձախողում, որ մեղք չէ:
2. Ձախողում, որ մեղք է:
3. Ձախողում, որ տանում է մեղքի:

2

6. Ներկայացրո՛ւ վերականգնում և կրկնակի անկում հասկացությունները (2-3 բուպե) Ուսանողի ձեռնարկ, 18-19-րդ էջեր:

Այսօրվա քննարկումը սկսելիս դու կարող ես համառոտ ներկայացնել վերականգնում և կրկնակի անկում հասկացությունները, որոնք մենք կօգտագործենք այս դասընթացին: Ուսանողի ձեռնարկի 18-19-րդ էջերում կա այս երկու տերմինների համապարփակ բացատրությունը: Կարևորը, որ դու պետք է հասկանաս, քո ուսանողների անցյալն է: Դրանք կարող են նրանց համար շատ ծանոթ տերմիններ լինել՝ կախված նրանց անցյալից:

Այստեղ կարևոր է ընդգծել, որ մենք աշխատելու ենք ձախողմանը, վերականգնմանն ու կրկնակի անկմանն ուղղված՝ աստվածաշնչյան հիմք ունեցող մոդելով:

7. Անցկացրո՛ւ Ա. կետը. «Ինչպե՞ս են սովորաբար արձագանքում ձախողմանը» (5-7 բուպե) Ուսանողի ձեռնարկ, 20-22-րդ էջեր:

Խնդրի՛ր ուսանողներին՝ գրել այն մի քանի տարբեր ձևերի մասին, թե ինչպես են նրանք արձագանքել ձախողմանն անցյալում:

Դու կարող ես նաև բերել սառցալեռան օրինակը՝ ձախողմանը վերաբերվելու մի քանի տարբեր մոտեցումներ ներկայացնելու համար: Որոշ ավելի տարածված մոտեցումներ քննարկված են Ուսանողի ձեռնարկի 20-22-րդ էջերում:

8. Անցկացրո՛ւ Բ. կետը. «Ի՞նչ պետք է անեմ ես, երբ ձախողվում եմ» (10-15 բուպե) Ուսանողի ձեռնարկ, 22-27-րդ էջեր:

Ուսանողներին բացատրի՛ր, որ Ուսանողի ձեռնարկում թվարկված ինը քայլերը ձախողմանն արձագանքելու ընդհանուր պատկեր են: Այդ հարցերից որոշներին մենք կանդրադառնանք կամ այս դասերին (օրինակ՝ ներում խնդրել և փոխհատուցել), կամ էլ ավելի ուշ՝ այս դասընթացի ընթացքում:

Ի՞նչ պետք է անեմ ես, երբ ձախողվում եմ:

1. Ես պետք է ընդունեմ, որ սխալ եմ:
2. Ես պետք է Աստծուն խնդրեմ, որ ների ինձ:
3. Ես պետք է ներեմ ինքս ինձ:
4. Ես պետք է որոշում կայացնեմ՝ դադարել մեղք գործել:
5. Պետք է ներում խնդրեմ նրանցից, ովքեր վիրավորվել են:
6. Պետք է գտնեմ ձախողման պատճառը:
7. Պետք է փնտրեմ ձախողումից դուրս գալու Աստծո ձևը:
8. Պետք է թույլ տամ, որ մարդիկ ասեն խնդիրներիս մասին:
9. Պետք է շարունակեմ աճել:

2

Աճել ձախողումների միջոցով, Ուսանողի ձեռնարկ, էջեր 22-27

Այս դասի համար կարևոր է, որ դու հաճախակի օգտագործես «վերականգնում» հասկացությունը, երբ խոսես ձախողմանն արձագանքելու մասին: Որո՞նք են վերականգնման քայլերը: Մենք ուզում ենք, որ նրանք ըմբռնեն, որ վերականգնումն այն է, ինչի վրա նրանք պետք է կենտրոնանան ձախողմանն արձագանքելիս:

Առանցքայիններից մեկը, որ մենք այսօր ուզում ենք փոխանցել ուսանողներին, այն է, որ վերականգնումը գործընթաց է: Փոքր ձախողումները վերականգնման փոքր քայլեր են պահանջում: Լուրջ ձախողումները փոփոխության լուրջ քայլեր են պահանջում իրական վերականգնում ունենալու համար:

Այս ողջ դասի ընթացքում մենք ուզում ենք ընդգծել, որ ձախողումը կարող է դառնալ հնարավորություն՝ աճելու, եթե մենք ճիշտ որոշում ընդունենք, թե ինչպես ենք արձագանքելու ձախողմանը:

Երբ անցնեք 3-րդ կետը՝ «Ես պետք է ներեմ ինքս ինձ», մատնանշի՛ր, որ այս քայլի մեջ առնվազն երեք մարդ կա ներգրավված:

2

Առաջին. Ես պետք է Աստծուց ներում խնդրեմ: Աստված պետք է ների ինձ: Մակայն ես կարող եմ այստեղ կանգ առնել:

Երկրորդ. Ես կարիք ունեմ ներողություն խնդրելու այն անձնավորությունից, ով տուժել է իմ ձախողումից: Դրանք կարող են մեկից ավելի մարդիկ լինել:

Երրորդ. Այս ներման գործընթացի մեջ մեկ այլ անձնավորություն էլ կա ներգրավված. դու ինքդ: Դու կարիք ունես ինքդ քեզ ներելու այդ ձախողման համար: Որոշ մարդկանց համար սա այս գործընթացի ամենադժվարին հատվածն է:

Երբ անցկացնես 5-րդ կետը՝ «Պետք է ներում խնդրեմ նրանցից, ովքեր վիրավորվել են», արա՛գ անցիր այն: Բացատրի՛ր, որ դրա մասին ավելի մանրամասն կանցնեք ավելի ուշ՝ այս դասի ընթացքում:

9. Քննարկի՛ր ձախողման վերաբերյալ աստվածաշնչյան պատմություններ (5-15 բույե):

Այս հատվածում դու կարող ես քննարկել մեկ կամ երկու պատմություն Աստվածաշնչից՝ թե ինչպես են ուրիշ մարդիկ արձագանքել իրենց ձախողումներին: Դու կարող ես անդրադառնալ նաև նրանց ձախողման հետևանքներին: Այդ դեպքերից որոշների քննարկումը կարող է օգնել ուսանողներին՝ ավելի լավ պատկերացում կազմել այն քայլերի վերաբերյալ, որոնք դու հենց նոր թվարկեցիր «Ի՞նչ պետք է ես անեմ, եթե ձախողվել եմ» վերնագրի տակ:

Ահա մի քանի աստվածաշնչյան դեպքեր, որոնք կարող ես օգտագործել այստեղ.

- Ադամն ու Եվան եղեմի պարտեզում. Ծննդոց 3գլ.
- Կայենի կոնֆլիկտն Աստծո և իր եղբոր հետ. Ծննդոց 4:1-16
- Մավուդ թագավորը փորձում է կոծկել իր սխալը. Ա Թագավորաց 15գլ.
- Դավթի մեղքը Բերսաբեյի հետ. Բ Թագավորաց 11 և 12 գլ. (հատկապես նշի՛ր Դավթի արձագանքը, երբ Նաթան մարգարեն հանդիմանեց նրան իր մեղքի համար. Բ Թագավորաց 12:13-23):
- Պետրոսի՝ Քրիստոսին ուրանալը. Մատթեոս 26գլ.
- Անառակ որդին. Ղուկաս 15:11-32

**10. Ներկայացրո՛ւ Գ. կետը. «Ներում խնդրել»
(2-3 բույլ) Ուսանողի ձեռնարկ, 28-32-րդ էջեր:**

Ներկայացրո՛ւ ներում խնդրելու վերաբերյալ դասի մյուս խոշոր բաժինը: Կարող ե՞ս օգտակար լինել՝ սա դիտել որպես մի քայլ վերականգնման գործընթացի մեջ: Ներում խնդրելու մասին խոսելուց հետո մենք կխոսենք փոխհատուցման մասին: Բայց և այնպես, լավ կլինի, եթե ներում խնդրելը ներկայացվի որպես փոխհատուցման կարևոր քայլ:

Ի՞նչ է փոխհատուցումը: Դա ինչ-որ բանի փոխարեն հատուցելն է, վերադարձնելը այն վիճակին, ինչպիսին որ այն կար: Մենք ուզում ենք վերականգնել փոխհարաբերությունները, վերականգնել վերաբերմունքները և վարքը: Մենք ուզում ենք դրական աճ տեսնել ներում խնդրելու և փոխհատուցելու հետևանքով:

Ներում խնդրելու թեման քննարկելիս առաջինը բացատրի՛ր, թե որքան կարևոր է այն անձնավորության մոտ գնալը, ում դու քո ձախողման հետևանքով վիրավորել ես: Բացատրի՛ր, որ սատանան կփորձի քեզ համոզել, որ մոռանաս այդ անձնավորության մոտ գնալու և ներում խնդրելու մասին: Օրինակ, մարդը կարող է ընկնել կրքի փորձության մեջ և կրքոտ մտքեր ունենալ: Դիմացինը հավանաբար չի իմանա, թե ինչ է տեղի ունենում նրա մտքում, այնպես որ, կարիք չկա գնալ և ներողություն խնդրել այդ կրքոտ մտքերի համար: Իրականում, նման դեպքերում, դա ավելի շուտ վնաս, քան թե օգուտ կրերի դիմացինին:

**11. Ներկայացրո՛ւ 1-ին ենթակետը՝ «Նախքան ես ներում կխնդրեմ»
(5 բույլ) Ուսանողի ձեռնարկ, 29-30-րդ էջեր:**

Քննարկի՛ր, թե ինչ պետք է նրանք անեն, նախքան տվյալ անձնավորության մոտ գնալն ու իրենց արածի համար ներում խնդրելը.

- Ա. Ընդունեն ինքս իմ և Աստծո առաջ, որ ես սխալ էի:
- Բ. Հստակ իմանամ, թե ինչն եմ սխալ արել:
- Գ. Ծրագրեմ, թե ինչ եմ ասելու, երբ խոսեմ այդ անձնավորության հետ:

Ղուկաս 15-րդ գլխում «Անառակ որդու» պատմությունը լավ օրինակ է ներողություն խնդրելու գործընթացի վերաբերյալ: Որդին գիտակցում է իր մեղքը, որոշում է տուն վերադառնալ և ծրագրում է, թե ինչ պետք է ասի, երբ տեղ հասնի: Դու կարող ես օգտագործել այս պատմությունը ողջ դասի ընթացքում՝ ներման տարբեր կողմերը նկարագրելու համար, և այն, թե ինչ

մասնակցություն ունեն այս պատմության մեջ դրա երեք հիմնական դերակատարները:

Մրա վերաբերյալ տե՛ս Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի հարցերը: Դու կարող ես ուսանողներից մեկին խնդրել՝ ամփոփ ներկայացնել պատմությունը ողջ դասարանի օգուտի համար, որից հետո հնարավորություն տալ նրանց՝ կիսվել այդ հարցերին տված իրենց պատասխաններով:

2

**12. Ներկայացրո՛ւ 2-րդ ենթակետը՝ «Ներում խնդրելու սխալ ձևեր»,
և 3-րդ ենթակետը՝ «Ներողություն խնդրելու ճիշտ ձև»
(5-15 րոպե) Ուսանողի ձեռնարկ, 30-32-րդ էջեր:**

Դասի այս հատվածն անցնելիս դու կարող ես ուսանողներին հանձնարարել՝ դերակատարման միջոցով ցույց տալ ներողություն խնդրելու սխալ ձևերն ու ներողություն խնդրելու ճիշտ ձևը: Յուրաքանչյուր դերակատարման համար առանձնացրո՛ւ երկու ուսանողի, թող նրանք ցույց տան ներողություն խնդրելու տարբեր մեթոդները:

Եթե ինչ-որ ձևով հնարավոր է, տեսաձայնագրի՛ր այդ դերակատարումները: Ուսանողներին դուր կգա այն նորից դիտել, և ամեն անգամ դիտելիս դասի ուսուցման այս հատվածը նորից կտպավորվի նրանց սրտում:

Ներողություն խնդրելու ճիշտ ձևը վերանայելիս համոզվի՛ր, որ նրանք հասկանում են դրա երկու մասերը: Առաջին մասում նրանք պետք է խոստովանեն, թե ինչն են սխալ արել: Քաջալերի՛ր նրանց, որպեսզի գտնեն ներքին վերաբերմունքը (արտաքին պատճառը) և արմատական խնդիրը, այլ ոչ թե ընդամենը՝ արտաքին խնդիրը:

Երկրորդ մասը՝ «Դու կներե՞ս ինձ» պետք է ձևակերպել որպես հարց: Քանի որ նրանք հարց են տալիս, ուրեմն պետք է սպասեն, որ դիմացինը պատասխանի:

Փորձի՛ր մի քանի օրինակներ բերել, թե ինչպես են մարդիկ սա ճիշտ ձևով կատարել և ինչ արդյունք են ունեցել: Դու կարող ես նաև այնպիսի օրինակներ բերել, երբ մարդիկ ներողություն խնդրելու սխալ ձևեր են օգտագործել և դրանից ինչ արդյունք են ունեցել:

Ներողություն խնդրելու և մաքուր խղճմտանք ձեռք բերելու ողջ թեման ավելի մանրամասնորեն քննարկված է *Institute in Basic Life Principles*-ում

ներկայացված նյութերում: Եթե դու մասնակցել ես այդ սեմինարին, կարող ես վերանայել սեմինարի քո նշումները: Ուսանողի ձեռնարկում ներում խնդրելու վերաբերյալ ներկայացված մտքերը շատ նման են այդ սեմինարում ներկայացվածներին:

Դու կարող ես ներկայացնել մի քանի պատճառաբանություններ, որ սովորաբար օգտագործում են, երբ ինչ-ինչ պատրվակով ներողություն խնդրելու այս մեթոդը որոշ մարդկանց համար չի գործում: Դրանք իրականում պատճառաբանություններ են: Եթե այս մեթոդը ճիշտ օգտագործվի, այն իսկապես կգործի և մեծ արդյունք կտա իրենց ձախողումներից դասեր սովորելու ընթացքում:

2

13. Ներել և մոռանալ (2-5 րոպե):

Դժվարին խնդիրներից մեկը նորադարձների համար՝ ներելու և մոռանալու միջև հավասարակշռությունը գտնելն է: Երբեմն մարդիկ ուզում են մոռանալ իրենց ձախողման մասին՝ նախքան իրենց կատարած սխալի համար ներում ստանալը: Նրանք նաև հակված են ավելի շուտ մոռանալ իրենց ձախողման մասին, քան դժվար աշխատանք կատարել, որն անհրաժեշտ է իրենց կյանքի այդ ասպարեզում փոփոխություն բերելու համար:

Այս ծայրահեղության մեջ է այն անձնավորությունը, ով ցանկանում է չափից ավելի շուտ մոռանալ իր անցած ձախողումները: Երբեմն նա մոռանում է իր սխալների մասին՝ նախքան փոխհարաբերությունների վերականգնումը այն անձնավորության հետ, ում նա իր սխալով վնասել է: Այս դեպքում տուժածը կշարունակի զգալ իրենց խախտված փոխհարաբերությունների ցավը: Չափազանց արագ մոռանալու հետևանք է նաև այն, որ տվյալ անձնավորությունը չի կարողանում սովորել այն դասերը, որ Աստված է ուզում: Արդյունքում, շատ չանցած, տվյալ մարդը նորից է ձախողվում նույն ասպարեզում, քանի որ չի սովորել իր կյանքում տվյալ ձախողումը կանխելու Աստծո ձևը:

Մեկ այլ ծայրահեղություն է այն անձնավորությունը, ով մտքում նորից ու նորից վերապրում է իր անցած ձախողումները: Սա ընդամենը ծառայում է մարդու ներսում հետևյալ վերաբերմունքի ձևավորմանը՝ «Ես անուղղելի ձախողակ եմ»: Այդպիսի անձնավորությունը քաջալերանքի կարիք ունի, որպեսզի կարողանա անկեղծ լինել իր ձախողման վերաբերյալ և որ հետո առաջ գնա ու տեսնի այն լավ բաները, որ տեղի են ունենում իր կյանքում:

2

14. Հարցեր Ուսուցման ձեռնարկ, Նախագիծ 2-րդից (3-5 բույս):

Նախագիծ 2-րդի 6-րդ հարցն ուսանողներին հնարավորություն է ընձեռում՝ գրել ցանկացած հարց, որ նրանք ունեն ներման և փոխհատուցման վերաբերյալ: Դու կարող ես դասի այս հատվածում ժամանակ հատկացնել և քննարկել այն հարցերը, որ նրանք ունեն ներման վերաբերյալ: Խնդրի՛ր նրանց՝ պահել փոխհատուցման վերաբերյալ իրենց հարցերը մինչև դասի վերջը, երբ ավելի մանրամասն կքննարկեք տվյալ թեման:

15. Ներել նրանց, ովքեր վիրավորել են քեզ (5 բույս):

Ներման թեման քննարկելիս, հիմնականում պետք է կենտրոնանալ, թե ինչպես ճիշտ ներում խնդրել, եթե ինչ-որ մեկին վիրավորել ես: Դու կարող ես համառոտ նշել, որ կարիք կա արագ ներելու, եթե ինչ-որ մեկը գալով խոստովանում և ներողություն է խնդրում իր սխալի համար:

Առակաց 17:9. «Հանցանքը ծածկողը սեր է փնտրում, բայց դրա մասին պատմողը բաժանում է մտերիմ բարեկամներին»:

Քեզ վիրավորողներին ներելու այս թեման շատ ավելի մեծ հարց է, և կարիք կա առանձին դաս հատկացնել դրան:

16. Փոխհատուցում. ուսուցչի ծրագրավորում

Փոխհատուցման թեման, հավանաբար, ավելի շուտ պատկանում է «միս» դասակարգմանը, քան «կաթ» դասակարգմանը «հոգևոր կերակուրների» մեջ: Սա հաշվի առնելով՝ ուշադիր կազմի՛ր ծրագիր, թե ինչպես ես այն հրամցնելու քո ուսանողներին: Դու կարող ես ընդամենը համառոտ անցնել փոխհատուցմանը վերաբերող հիմնական հարցերը՝ գլխավորապես կենտրոնանալով այն օրինությունների վրա, որոնք գալիս են Աստծո ձևով վարվելու դեպքում:

17. Ներկայացրո՛ւ Դ. կետը. «Փոխհատուցել» (2-5 բույս) Ուսանողի ձեռնարկ, 32-38-րդ էջեր:

Փոխհատուցման թեման ներկայացրո՛ւ՝ օգտագործելով քրիստոնյաների մի քանի վկայություններ, որոնք հետևել են աստվածաշնչյան այս խորհրդին: Քո ուսանողներն անմիջապես պետք է տեսնեն, որ սա քրիստոնեական կյանքի իրատեսական մի մաս է: Մի՛ վախեցիր օգտագործել օրինակներ, որտեղ հետևանքները ցավոտ են եղել: Քո բոլոր օրինակները չէ, որ պետք է լինեն Աստծո այն հրաշքների մասին, երբ Աստված ամեն բան հրաշալի

ավարտի է հասցրել: Բրայեն Սվեյլսի օրինակը զետեղված է Ուսանողի ձեռնարկի 34-35-րդ էջերում:

18. Ներկայացրո՛ւ Ենթակետ 1-ինը՝ «Փոխհատուցման աստվածաշնչյան պատկերը» (2-5 բույե) Ուսանողի ձեռնարկ, 33-րդ էջեր:

Փոխհատուցման աստվածաշնչյան պատկերը ներկայացնելիս փորձի՛ր ներկայացնել դրական ակնկալիքի վերաբերմունք. Աստված կարող է ցանկացած ձախողում վերածել ինչ-որ լավ բանի, եթե հետևենք Նրա ճանապարհներին: Ուսանողների հետ քննարկի՛ր Ուսանողի ձեռնարկի 33-րդ էջում բերված աստվածաշնչյան համարները: Դու կարող ես հղում անել Հին Կտակարանի օրենքներին և համառոտ հետազոտել այդ ժամանակների փոխհատուցման վերաբերյալ որոշ մանրամասնություններ:

19. Անցկացրո՛ւ Ենթակետ 2-րդը՝ «Փոխհատուցման քայլեր» (5-7 բույե) Ուսանողի ձեռնարկ, 36-րդ էջեր:

Այս մասը քննարկելիս հստակեցրո՛ւ առաջնությունները, որ մենք պետք է ունենանք, երբ ուզում ենք փոխհատուցել: Դրանք են.

- Ա. Առաջինը վերականգնի՛ր քո փոխհարաբերությունն Աստծո հետ:
- Բ. Վերականգնի՛ր քո փոխհարաբերությունը տուժած անձնավորության հետ:
- Գ. Նյութական փոխհատուցո՛ւմ տուր քո գողացած կամ փչացրած իրի համար:

Ղուկաս 19:1-10-ում Զակքեոսի պատմությունը լավ օրինակ է այն մասին, թե ինչպես է փոխհատուցումը համապատասխանում նորադարձ քրիստոնյայի կյանքին: Այս պատմությունը նաև սովորեցնում է, որ ինչքան շուտ է նորադարձ քրիստոնյան փոխհատուցում իր անցած մեղքերի համար, այնքան լավ: Տե՛ս Նախագիծ 2-րդը՝ դասի ուսուցման այս հատվածում հնարավոր հարցերի դեպքում օգտագործելու համար:

20. Մի՛ ստիպիր քո ուսանողներին՝ համաձայնվել այս ուսուցման հետ:

Մի՛ փորձիր հարկադրել փոխհատուցման գաղափարը քո ուսանողների կյանքում, հատկապես՝ նորադարձների: Նրանց մոտեցիր հետևյալ կերպ. «Եկե՛ք տեսնենք, թե Աստված ինչ ունի ասելու մեր կյանքի այս դժվարին ասպարեզի վերաբերյալ»: Թող Սուրբ Հոգին համոզի նրանց, եթե նրանք կարիք ունեն իրենց կյանքում փոխհատուցում կատարելու:

Դու կարող ես նրանց ասել, որ նայեն Ուսանողի ձեռնարկի 34-35-րդ էջերում գտնվող՝ Բրայեն Սվեյլսի պատմությունը՝ որպես միջոց մատնանշելու այն դրական օգուտները, որ նա ստացել էր իր գործողություններից:

21. Անցկացրո՛ւ 3-րդ կետը՝ «Փոխհատուցելու հետևանքները» (3-10 բույս) Ուսանողի ձեռնարկ, 36-38-րդ էջեր:

Քննարկի՛ր փոխհատուցման վերաբերյալ՝ Աստծո ծրագրին հետևելու արդյունքները: Մատնանշի՛ր, որ սատանան կփորձի վախ ներշնչել նրանց սրտում, որպեսզի հետ պահի փոխհատուցման մտքից:

22. Փոխհատուցման օգուտները բնավորության գծերի հարցում (3-5 բույս):

Փոխհատուցումը հաճախ ցավոտ փորձառություն է, և շատ քաջություն է պահանջվում Աստծո ձեռնից հետևելու համար: Այսպիսի իրավիճակը նորադարձ քրիստոնյաներին նաև հնարավորություն է տալիս բնավորության ներքին որակներ զարգացնելու համար: Քննարկի՛ր այն մի քանի որակները, որոնք նրանք կարող են զարգացնել այսպիսի իրավիճակներում:

23. Պատասխանատվություն ստանձնել անցած արարքների համար (2-5 բույս):

Փոխհատուցման թեման ուղղակի կապ ունի անցյալի արարքների համար պատասխանատվություն վերցնելու հետ: Սա նորադարձ քրիստոնյաների համար համընդհանուր թուլություն է, հատկապես նրանց, ովքեր գալիս են Թին Չելենջ և նմանատիպ քրիստոնեական ծառայություններ: Նրանք սովոր չեն պատասխանատվություն ստանձնել իրենց անցած արարքների համար:

«Ցանելու և հնձելու» աստվածաշնչյան սկզբունքը հրաշալի է համընկնում այստեղ: Տե՛ս Գաղատացիների 6:7-8: Կան հետևանքներ, որ մենք կհնձենք, եթե ձախողվենք, եթե մեղք գործենք: Մենք վստահ ենք, որ Աստված կների մեր մեղքերը, երբ մենք խոստովանենք Նրան: Բայց և այնպես, Նրա ներումը չի նշանակում, որ Նա ինքնըստիներյան դադարեցնում է ցանելու և հնձելու

սկզբունքը: Աստված կների մեղքը, կվերցնի մեղքի հանդիմանությունը և կվերականգնի հաղորդակցությունն ու ներքին խաղաղությունը: Սա տեղի ունեցավ Դավթի կյանքում, երբ նա խոստովանեց շնության և մարդասպանության իր մեղքը (տե՛ս Բ Թագավորաց 11 և 12 գլ.): Սակայն նրա մեղքի հետևանքները մնացին (Բ Թագավորաց 12:14), նրա մեղքը շրջակա ազգերին առիթ տվեց հայհոյելու Աստծուն:

Շատ անգամներ մեր ձախողումները կարող են մնայուն սպիներ թողնել: Սակայն նման սպիների հանդեպ ճիշտ վերաբերմունքը կարող է մեծ օժանդակություն գտնել, եթե մենք հետևենք փոխհատուցման Աստծո ձևին և թույլ տանք Նրան՝ բժշկություն բերել մեր վնասված հարաբերությունների մեջ:

24. Անձնական կիրառություն (5-10 րոպե):

Ա. Ձախողումից վերականգնում տանող առաջին քայլերը:

Թող քո ուսանողները անդրադառնան Ուսանողի ձեռնարկի 22-27-րդ էջերին և վերանայեն առաջին քայլերը, որ նրանք պետք է անեն ձախողվելիս: Թող նրանք առանձնացնեն որևէ ձախողում, որը դեռ պետք է լուծեն իրենց կյանքում, որից հետո թող ընտրեն այս քայլերից մեկը կամ երկուսը, որոնք նրանք կարիք ունեն կիրառելու տվյալ ձախողման համար:

Բ. Ներում խնդրել:

Քաջալերի՛ր ուսանողներին՝ ներողություն խնդրելու ճիշտ ձևը կիրառելու համար: Ասա՛ նրանց, որ անգիր անեն Ուսանողի ձեռնարկի 31-րդ էջում բերված պարզ ձևը:

«Ես սխալ էի (ասա՛, թե ինչում ես սխալ եղել), դուք կներե՞ք ինձ»:

Դու կարող ես նրանց մեկ-երկու րոպե աղոթելու ժամանակ տալ: Խնդրի՛ր Աստծուն, որ հայտնի նրան (եթե կա ինչ-որ մեկը), ում մոտ նրանք պետք է գնան և ներողություն խնդրեն:

Թող նրանք գրի առնեն, թե ինչ են ծրագրում ասել այդ անձնավորությանը: Դու կարող ես նրանց խնդրել, որ գրեն, թե ինչ տեղի ունեցավ, երբ գնացին այդ տուժած մարդու մոտ և ներողություն խնդրեցին:

2

Գ. Փոխհատուցում կատարել:

Եթե դու փոխհատուցման վերաբերյալ առանձին դասաժամ ունես, ապա պետք է անձնական կիրառությունը կենտրոնացնես այն հանգամանքի վրա, թե ինչպես կարող են նրանք աստվածաշնչյան այս ձևը կիրառել իրենց կյանքում: Որոշ նյութեր *Institute in Basic Life Principles*-ի սեմինարից կարող են շատ օգտակար մեթոդներ լինել, թե ինչպես գործնականում կիրառել աստվածաշնչյան այս ուսուցումը:

25. Հանձնարարություններ:

- Ա. Դասի վերջում գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 2-րդի՝ «Ներում խնդրել և փոխհատուցել» բաժնի համար:
- Բ. Դասի վերջում հարցաշա՛ր տուր Մատթեոս 6:14-15-ի վերաբերյալ:
- Գ. Թող ուսանողները կարդան իրենց՝ Ուսանողի ձեռնարկի 3-րդ գլուխը՝ հաջորդ դասաժամի քննարկմանը նախապատրաստվելու համար:

26. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
 Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
 Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարահասկանալի:
 Ի՞նչն ամենօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 3.

Ինչպե՞ս աճել իմ ձախողումների միջոցով:

Ծրագրել աճը:

1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:

Ես պետք է լսեմ ու հնազանդվեմ Սուրբ Հոգուն, որպեսզի Նա կարողանա ինձ օգնել՝ աճել իմ ձախողումների միջոցով:

2. Բանալի համար. Հովհաննես 16:13. :

«Սակայն, երբ Նա՝ ճշմարտության Հոգին գա, Նա ձեզ ամեն ճշմարտության կառաջնորդի, որովհետև Նա Ինքն իրենից չի խոսելու, այլ ինչ որ լսի, ա՛յն պիտի խոսի և ձեզ պիտի ցույց տա գալիք բաները»:

3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսուցման ուղեցույցի 3-րդ գլուխը համընթաց է այս դասին:
Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3-րդի՝ «Իմ ձախողումը» բաժինը համընթաց է այս դասին:

4. Դասի ջերմացում (3-5 րոպե):

Այսօրվա դասը ներկայացնելու համար օգտագործի՛ր ատրճանակի օրինակը: Այս օրինակի հիմնական նպատակն է՝ մատնանշել խնդրի տարբեր կողմերը: Երբ մենք գիտակցում ենք խնդրի տարբեր կողմերը, դա մեզ օգնում է տեսնել, թե ինչպես կարող ենք սովորել մեր ձախողումներից: Նախապատրաստություն.

Պատկերի՛ր հետևյալ նկարագրողումները PowerPoint-ի կամ մեծ թղթի վրա:

1. Պատկեր. Ատրճանակ:

Նշում. Ատրճանակը լիցքավորված է:

2. Պատկեր. Ցո՛ւյց տուր ծխի քուլա, որ դուրս է գալիս ատրճանակի փողից, և մի մարդ, որին կպել է գնդակը:

Նշում. Գնդակը, որ կպել է մարդուն:

3

3. Պատկեր. Մարդը՝ գետնին պառկած:

Նշում. Մարդը մահացած է:

4. Պատկեր. Նորից ցո՛ւյց տուր ատրճանակը:

Նշում. Ո՞վ է քաշել ձգանը:

5. Պատկեր. Ցո՛ւյց տուր մեկ այլ մարդու:

Նշում. Այս մարդն է քաշել ձգանը:

6. Պատկերը և նշումը. Մեծ տառերով գրի՛ր այս հարցը.

«Ինչպե՞ս պետք է պատժել այս մարդուն»:

7. Պատկեր. Ցո՛ւյց տուր հանցավոր մարդուն:

Նշում. Ինչպե՞ս կարող ենք օգնել այս մարդուն:

Արագ ներկայացրո՛ւ այս պատկերավոր օրինակը: Վերջին շրջանակն ավարտվում է հարցով: Ժամանակ մի՛ վատնիր ընդարձակ քննարկման վրա՝ թե ինչ համապատասխան պատիժ սահմանել: Նշի՛ր, որ այս պատկերավոր օրինակներով դասի նպատակն է՝ տեսնել այն տարբեր կողմերը, որ ներառված են ձախողման իրավիճակի մեջ:

1. Կա գործողություն (ձախողումը). նա կրակել է ատրճանակով:

2. Գործողության արդյունքը (հետևանքը). մարդը մահացել է:

3. Ձախողման պատճառը. մի մարդ կրակել է ատրճանակով:

Մարդն է ձախողման իրական պատճառը, ոչ թե ատրճանակը:

Նա է որոշում ընդունել՝ քաշել ձգանը:

4. Պատիժը կամ դաստիարակությունը հաճախ ձախողման հետևանքներն են: Պատիժը նույնը չէ, ինչ գործողության հետևանքները: Արդյունքը մեկ այլ մարդու մահն էր: Պատիժը տրվում է ձախողման պատճառով:

5. Լուծում. ինչպե՞ս կարելի է մարդուն օգնել՝ դուրս գալ այդ վիճակից: Ինչպե՞ս կարող ենք օգնել այս սխալված անձնավորությանը՝ աճել:

5. Ներկայացնել այսօրվա դասի թեման՝ քննարկման համար:

Մեր այսօրվա դասին մենք կկենտրոնանանք աճման գործընթացի վրա, որը պետք է մեր կյանքում ձախողումներն ու խնդիրները հաղթահարելու համար: Մենք սա կբաժանենք աճման երեք խոշոր բաժինների:

- Ա. Հաղթահարել խնդիրը:
- Բ. Ապրել առողջ ապրելակերպով:
- Գ. Քայլեր ձեռնարկել նորից նույն ձախողումը չունենալու համար:

Աճի այս երեք քայլերից յուրաքանչյուրը կարևոր է, այնպես որ ուշադիր ծրագրիր քո ժամանակը, որպեսզի ի վիճակի լինես այդ երեքին էլ անդրադառնալ:

Դու պետք է նրանց կրկին հիշեցնես, որ բոլոր ձախողումները նույնը չեն: Ինչպես Գլուխ 1-ինում քննարկեցինք՝ ձախողումները կարելի է խմբավորել երեք խոշոր դասակարգումների: Այսօրվա քննարկման ժամանակ մենք կկենտրոնանանք այն ձախողումների վրա, որոնք մեղք են: Բայց և այնպես, այս սկզբունքները հեշտությամբ կարելի է կիրառել նաև այն ձախողումների առումով, որոնք մեղք չեն:

Ձախողման երեք տեսակներ.

1. Ձախողում, որ մեղք չէ:
2. Ձախողում, որ մեղք է:
3. Ձախողում, որ տանում է մեղքի:

6. Ներկայացրո՛ւ Ա. կետը՝ «Հաղթահարել խնդիրը» (2-3 բոլակ) Ուսանողի ձեռնարկ, էջ 40:

Բացատրի՛ր, որ աճի առաջին՝ մեր կողմից քննարկվելիք ասպարեզը, վերաբերում է այն խնդրին, որը պատճառ է հանդիսանում ձախողման համար: Դու կարող ես արագ վերանայել առաջին քայլերից մի քանիսը, որոնք մենք պետք է ձեռնարկենք ձախողմանն արձագանքելիս (այդ մասին անցանք Գլուխ 2-րդում):

Դու կարող ես վերանայել այս դասընթացի Գլուխ 1-ինում բերված սառցալեռան օրինակը և դրան վերաբերող աղյուսակը: Այն մարդը, ով պարզապես գործ է ունենում արտաքին խնդիրների հետ, ոչ մի մնայուն առաջընթաց չի տեսնի: Սա ևս մի պատճառ է, թե ինչու կյանքի վրա իշխող

խնդիրներ ունեցող մարդկանց հետ մեր մոտեցման մեջ մենք շեշտում ենք, որ Հիսուս Քրիստոսն է իրական լուծումը մարդկային խնդիրների համար: Մարդու փոխհարաբերությունները Հիսուս Քրիստոսի հետ «սառցալեռան հատակն» է՝ բոլոր խնդիրների արմատական պատճառը: Եթե նրանք սկսեն սառցալեռան հատակից և սկսեն վարվել Աստծո ձևով՝ իրենց ձևով վարվելու փոխարեն, ապա շուտով կտեսնեն, թե ինչպես են իրենց արտաքին խնդիրներից որոշներն ավելի ու ավելի փոքրանում և հետո անհետանում:

3

7. Անցկացրո՛ւ Ա-1. կետը՝ «Ի՞նչ վերաբերմունք ունեմ ես ձախողման հանդեպ» (2-5 բույս) Ուսանողի ձեռնարկ, 40-41-րդ էջեր:

Թող ուսանողներից մի քանիսը կիսվեն, թե ինչպիսին է եղել իրենց վերաբերմունքը իրենց կյանքում տեղի ունեցած ձախողումների հանդեպ: Դու կարող ես նրանց հիշեցնել, որ *Խմբային ուսուցումներ նորադարձ քրիստոնյաների համար* դասընթացի *Վերաբերմունքներ* բաժնում այս թեման ավելի մանրամասն է քննարկված:

Գրի՛ր այն մի քանի տարածված վերաբերմունքները, որ քո ուսանողներն ունեցել են ձախողման առումով:

Այնուհետև քննարկի՛ր, թե ինչ է նշանակում դրական վերաբերմունք ունենալ ձախողման հանդեպ:

8. Անցկացրո՛ւ Ա-2. կետը՝ «Միսալ կարծիքներ և ճշմարտությունը» (2-5 բույս) Ուսանողի ձեռնարկ, էջ 41-42:

Մատնանշի՛ր, որ սխալ կարծիքները կապված են այն ձախողումների հետ, որոնք մեղք են ներառում: Մա քո ուսանողներից որոշների համար կարող է դժվարհասկանալի ճշմարտություն լինել:

Թող քո ուսանողներն իրենց կյանքից օրինակներ բերեն, թե ինչպես են սխալ կարծիքները կապված եղել իրենց ձախողումների հետ: Պատրա՛ստ եղիր բազմաթիվ լրացուցիչ օրինակներ բերելու համար քո կամ ուրիշ մարդկանց կյանքից:

9. Ներկայացրո՛ւ Ա-3. կետը՝ «Բացահայտի՛ր յուրաքանչյուր ձախողման պատճառը, հետևանքներն ու լուծումները» (2-5 բույե) Ուսանողի ձեռնարկ, 42-45-րդ էջեր:

Օգտագործի՛ր Ուսանողի ձեռնարկի 42-րդ էջի՝ «Հասկանալ իմ ձախողումը» աղյուսակը՝ դասի այս մասը ներկայացնելու համար:



3

Բացատրի՛ր, որ երբ մենք նայում ենք, թե ինչ է ներառված խնդրի հաղթահարման մեջ, պետք է տեսնենք, որ կան երեք հիմնական ասպարեզներ, որոնք մենք պետք է հետազոտենք, դրանք են՝ պատճառները, հետևանքները և լուծումները:

Եթե նրանք կենտրոնանան այս երեք հարցերից մեկի վրա, բաց կթողնեն այս աճի գործընթացի կարևոր մասերը: Ուսանողներից մեկը կարող է ասել. «Ինձ չի հետաքրքրում, թե ինչն է պատճառ հանդիսացել դրա համար, ես ընդամենը ուզում եմ լուծումը գտնել»:

Իրենց խնդիրների պատճառները հետազոտելիս շատ կարևոր է, որ նրանք պատասխանատվություն վերցնեն դրանց համար: Սա չպետք է վերածվի առիթի, որ իրենց խնդիրների համար մեղադրեն ուրիշներին:

10. Անցկացրո՛ւ Ա-3. ենթակետը՝ «Ինչպե՞ս է Աստված ուզում, որ արձագանքեմ այս ձախողմանը» (2-5 բույս) Ուսանողի ձեռնարկ, էջ 43:

Շատ կարևոր է, որ մենք շեշտենք, որ խնդիրների լուծման գործընթացը պետք է ներառի Հիսուսին: Մա է նոր և հաջողակ մոտեցման հիմքը՝ մեր խնդիրները լուծելիս:

Դու կարող ես օգտագործել մեկ կամ երկու օրինակ այն մարդկանց կյանքից, ովքեր իրենց խնդիրներին արձագանքել են Աստծուց օգնություն խնդրելով:

3

11. Անցկացրո՛ւ Ա-3-բ. ենթակետը՝ «Գործ ունենալ իմ ձախողման հետևանքների հետ» (2-5 բույս) Ուսանողի ձեռնարկ, 43-44-րդ էջեր:


Մատնանշի՛ր, որ մեր ձախողումների հետևանքները տարբերվում են մեր ձախողումների պատճառներից: Մենք, հնարավոր է, կարիք ունենանք հատուկ քայլեր ձեռնարկելու, որպեսզի արձագանքենք մեր ձախողումների այս հետևանքներին, եթե ցանկանում ենք ունենալ այն աճը, որ Աստված է ուզում մեզ տալ:

12. Անցկացրո՛ւ Ա-3-գ. ենթակետը՝ «Որո՞նք են տվյալ խնդրի համար Աստծո լուծումը կիրառելու քայլերը» (7-10 բույս) Ուսանողի ձեռնարկ, 44-46-րդ էջեր:

Այս թեման քննարկելիս շատ կարևոր է նրանց օգնել՝ տեսնելու համար, որ նրանք պետք է հատուկ քայլեր անեն՝ աճելու նպատակով: Շատ անգամ նորադարձ քրիստոնյաներն ուզում են արագ լուծում գտնել իրենց խնդիրների համար:

Քաջալերի՛ր ու հորդորի՛ր նրանց, որ հասկանան, որ իրական աճը ժամանակ է պահանջում, ինչպես նաև՝ տքնաջան աշխատանք: Տե՛ս Ուսանողի ձեռնարկն ավելի շատ տեղեկություն ստանալու և այս թեմաներն այստեղ քննարկելու համար:

Օգտագործի՛ր «Աճել իմ ձախողումների միջոցով» (Ուսանողի ձեռնարկ, էջ 45-րդ) աղյուսակը՝ մատնանշելու, որ հնարավոր է՝ առաջընթացի փոքր քայլեր պահանջվեն, երբ նրանք որևէ խնդրի համար լուծում են փնտրում:



3

Որոշ ուսանողներ կարող են հարցնել, թե ինչ պետք է նրանք անեն, եթե շարունակաբար ձախողվում են միննույն ասպարեզում։ Այս աղյուսակը ցույց է տալիս, թե ինչպես կարող է մարդն առաջընթաց ունենալ, մինչդեռ ձախողվում է։ Մարդիկ նաև ձախողվում են, քանի որ նրանց վերականգնման ռազմավարությունը նրանց համար չի գործում։ Հնարավոր է՝ նրանք կարիք ունենան վերանայելու իրենց վերականգնման ռազմավարությունը։

Տվյալ խնդրի համար Աստծո լուծումը կիրառելու քայլերի մասին է այս բաժնի վերջին՝ 3-րդ ենթակետը՝ «Վերականգնման ծրագիր՝ կազմիր» (Ուսանողի ձեռնարկ, էջ 45-րդ)։ Սա նրանց ասում է՝ անել ավելին, քան ընդամենն իրենց խնդիրը լուծելու մասին խոսելն է։ Նրանք պետք է գրեն քայլեր, որ պատրաստվում են անել որևէ կոնկրետ խնդրի լուծման համար։

Քո ուսանողներին բացատրի՛ր, որ «Վերականգնման ծրագիրն» ավելին է, քան ընդամենը մի քանի քայլեր գրելը՝ սեփական ուժերով իրենց խնդիրները հաղթահարելու համար։ Նրանք պետք է Աստծուն ներգրավեն այս ծրագրի մեջ։ Ի՞նչ է Աստված ցանկանում, որ նրանք գործածեն իրենց վերականգնման քայլերի մեջ։ Աստված հետաքրքրված է իրական լուծումներ՝ իրական վերափոխում ունենալու մեջ։


Նրանց համար լավ կլինի, եթե Աստծո մի քանի հատուկ խոստումներ ներառեն ծրագրի մեջ, որոնք համահունչ կլինեն իրենց վերականգնման ծրագրին։ Ընդամենը համոզվի՛ր, որ նրանք այստեղ պահում են հավասարակշռությունը. ես չեմ ուզում անել Աստծո կողմը այս

վերականգնման ծրագրում, սակայն նաև սխալ է ակնկալել, որ Աստված կանի իմ կողմը:

13. Անցկացրո՛ւ Ա-4. ենթակետը՝ «Ձախողումն առաջ է մղում ինձ» (2-5 բույե) Ուսանողի ձեռնարկ, 46-47-րդ էջեր:

Օգտագործի՛ր Ուսանողի ձեռնակի 47-րդ էջի՝ «Ձախողումն առաջ է մղում ինձ» աղյուսակը, որպեսզի օգնես ուսանողներին՝ տեսնելու, որ ձախողումը փոխում է մեր իրավիճակը:

3



Այս օրինակը կարելի է օգտագործել սույն դասընթացի ողջ ընթացքում՝ թե՛ այս դասի, թե՛ մնացած բոլոր դասերի ժամանակ, հատկապես, երբ խոսքը վերաբերում է կրկնակի անկումին:

Կան մի քանի առանցքային հարցեր, որոնք պետք է ներկայացնել ուսանողներին:

1. Փորձությունը կամ դրդումը մեզ բերում է որոշում կայացնելու կետին: Կամ մենք կարող ենք որոշել այն ուղին, որ Աստծո կողմից լավագույնն է մեզ համար, կամ էլ կարող ենք զիջել փորձությանը և թույլ տալ, որ այն մեզ հեռացնի Աստծո ուղուց:
2. Օգնի՛ր ուսանողներին՝ տեսնել, որ փորձությունների ենթարկվելը միշտ չէ, որ անմիջապես տանում է մեծ ձախողման, սակայն երբ մենք որոշում ենք արձագանքել մեր «հին ձևերով», դրանք մեզ ներքև են քաշում ձախողման ուղով:

3. Անգամ, երբ ձախողումը տեղի է ունենում, մենք դեռևս ընտրության հնարավորություն ունենք: Ինչքան երկար ենք մենք հապաղում Աստծո օգնությանը դիմելուց առաջ, այնքան հեռանում ենք այն տեղից, որտեղ Աստված է ուզում, որ մենք լինենք: Նկարագարդման վրա ցոյց տուր, որ այս օրինակը ներկայացնում է մի անձնավորության, որն ավելի է խորանում իր խնդրի մեջ՝ նախքան վերջապես Աստծո օգնությանը դիմելը:
4. Երբ մենք վերջապես ապաշխարում ենք և Աստծուց օգնություն խնդրում, Նա էլի՛ պատրաստ է մեզ օգնել: Սակայն ապաշխարությունը մեզ անմիջապես հետ չի բերում այն տեղը, որտեղ մենք պետք է լինեինք:
5. Մենք ամեն օր պետք է գործենք ըստ վերականգնման ծրագրի, որպեսզի վերադառնանք այն տեղը, որտեղ Աստված է ուզում, որ մենք լինենք: Մենք չենք գործում Աստծուց ներում ստանալու համար, դա անմիջապես է տեղի ունենում, երբ մենք խոստովանում ենք մեր մեղքերը: Բայց հին մեղսալից ձևերը հանելն ու Աստծո նոր ձևերը հագնելը գործընթաց է: Այն նաև վեր բարձրացող ընթացք է՝ ինչպես նկարագարումն է ցույց տալիս: Մենք Աստծո կարիքը կունենանք այս վերականգնման ընթացքում:

Օգտագործի՛ր հետևյալ պատմությունները՝ (1) Դավիթն ու Բերսաբեն և (2) Ադամն ու Եվան, որպեսզի ցույց տաս, որ ձախողումը մեզ ուրիշ տեղ է տանում: Մենք չենք խոսում ընդամենն աշխարհագրական փոփոխության մասին: Մենք խոսում ենք նաև փորձառության փոփոխության մասին: Մենք չենք կարող ժամանակի մեջ հետ գնալ, ջնջել ձախողումն ու դրա հետևանքները: Մենք ստիպված ենք ապրել այդ հետևանքներով:

Կարևոր է, որ քո ուսանողները հասկանան, որ նրանք պետք է իրենց աչքերը հառեն Հիսուսին և ավելի մոտենան Նրան: Իրենց ձախողումները լուծելու Աստծո ձևը ժամանակի մեջ հետ գնալը չէ, այլ՝ Նրա հետ առաջ գնալը:

**14. Ներկայացրո՛ւ Բ. կետը՝ «Ապրել առողջ ապրելակերպով»
(2-5 բույսեր) Ուսանողի ձեռնարկ, 47-51 էջեր:**

Դասի այս խոշոր բաժինը ներկայացնելիս շատ կարևոր է փոխանցել, որ ձախողման միջոցով աճելն ավելին է, քան այն խնդիրն ուղղելը, որն առաջացել է ձախողման պատճառով:

Եթե նրանք ուզում են Աստծո ուրաճ անձնավորությունը դառնալ, ապա ձախողման միջոցով աճելը պետք է ներառի նրանց ամբողջ կյանքը, ոչ թե ձախողման հետևանքով առաջացած խնդիրը միայն:

3

Համոզվի՛ր, որ նրանք հասկանում են՝ երբ մենք ասում ենք՝ «Ապրել առողջ ապրելակերպով», նկատի ունենք ավելին, քան ֆիզիկական առողջությունը:

Եթե այս ուսուցումն անցկացվում է Թին Չելենջի կենտրոնում կամ նմանատիպ վերականգնման ծրագրի շրջանակներում, ապա այս պահին լավ կլինի մատնանշել, որ մենք անհանգստացած ենք ոչ միայն նրանց թմրամոլության հարցերը լուծելով, այլ շատ ավելի մեծ նպատակ ունենք: Կյանքի իսկական առանցքն այն է, որ սովորենք՝ ինչպես հետևել Հիսուսին առօրյա կյանքում:

**15. Անցկացրո՛ւ Բ-1. ենթակետը՝ «Ես կարիք ունեմ բացահայտելու Աստծո ծրագիրն իմ կյանքի համար»
(2-3 բույսեր) Ուսանողի ձեռնարկ, 48-49-րդ էջեր:**

Սա ընդամենը քո աշխատանքային կարիերան բացահայտելը չէ: Մենք պետք է նրանց օգնենք՝ տեսնելու, որ Աստված հետաքրքրված է անգամ փոքր բաներով, որոնք տեղի են ունենում նրանց կյանքում:

Այստեղ առանցքային է այն, որ մենք նրանց չենք առաջարկում ծրագիր, որպեսզի իրենց ուժերով հասնեն ավելի լավ կյանքի: Մենք Աստծո ծրագիրն ենք առաջարկում ավելի լավ կյանքի հասնելու համար: Հենց սա՛ է իրական կյանքը:

16. Անցկացրո՛ւ Բ-2. ենթակետը՝ «Հիսուսի հետ ապրելու կարգ ու կանոն զարգացնել» (5-10 բույս) Ուսանողի ձեռնարկ, 49-50-րդ էջեր:

Դասի այս մասում այն կենտրոնական միտքն է, թե ինչ է նշանակում Հիսուսի աշակերտը լինել: Աճի այս ասպարեզն է, որ մարդուն դարձնում է հասուն քրիստոնյա:

Մատնանշի՛ր, որ շատ նորադարձ քրիստոնյաներ իրենց ընտանիքներում ապրել են անառողջ հարաբերություններով: «Նորմալ կյանքի» նրանց պատկերացումը հիմնված է նրանց անցյալի անառողջ հարաբերությունների փորձառության վրա: Իսկ Աստված նրանց կոչ է անում՝ ապրել «նորմալ կյանք» Իր տեսակետից: Սա քո ուսանողների համար կարող է օտար լեզվի նման անհասկանալի լինել:

Մի հրաշալի գիրք, որում մանրամասնորեն ներկայացվում են առողջ ապրելակերպի փուլերը քրիստոնյայի համար, Ջեյմս Ֆրիսենի և ուրիշ չորս հեղինակների՝ «*The Life Model: Living from the Heart Jesus Gave You: The Essentials of Christian Living*» գիրքն է: Այն դժվար է ձեռք բերել, սակայն կարելի է պատվիրել՝ զանգահարելով 231-745-0500, կամ գտնել հետևյալ կայքում. www.LifeModel.org:

Այս դասին այլևս ժամանակ չի մնում, որպեսզի ավելի մանրամասն դիտարկենք հասունության բոլոր քայլերը, որ ներկայացված են «*The Life Model*» գրքում, սակայն հրաշալի կլինի, եթե նրանք ինքնուրույն կարդան և ուսումնասիրեն այն:

Դասի այս մասն անցկացնելիս դու կարող ես մանրամասնորեն անդրադառնալ Եփեսացիներին 4:1-3 և 17-32 հատվածներին, որոնցում խոսվում է այն մասին, թե ինչ պետք է մենք հանենք և հագնենք Հիսուսի հետ մեր նոր կյանքում:

17. Անցկացրո՛ւ Բ-3. ենթակետը՝ «Առողջ ապրելակերպի սահմաններ՝ ընկալողի» (2-5 բույլ) Ուսանողի ձեռնարկ, 50-51-րդ էջեր:

Սահմանների թեման կարող էր ինքնին մի ամբողջ դաս լինել, անգամ մի ամբողջ դասընթաց: Մենք այսօր պարզապես ուզում ենք ներկայացնել այդ գաղափարը և օգնել նրանց՝ տեսնելու համար, թե ինչ սահմաններ գոյություն ունեն, և թե ինչպես դրանք կարող են օգնել նրանց ձախողումը լուծելու հարցում:

3

Դր. Հենրի Քլաուդը և Դր. Ջոն Թաունսենդը սահմանների վերաբերյալ գրքերի մի ամբողջ շարք են գրել, որոնք բոլորն էլ հրաշալի աղբյուր են այս թեմայի համար:

Հարցրո՛ւ քո ուսանողներին, թե այսօր ինչ տեսակի սահմաններ նրանք կարող են դնել, որոնք կօգնեն իրենց կյանքում: Նրանց պատասխանները քեզ կօգնեն հասկանալու, թե ինչքանով են նրանք ըմբռնում այս թեման և որտեղ կարիք ունեն աճելու:

Բացատրի՛ր, որ սահմանները բանտ չեն՝ նրանց ազատությունը գողանալու համար, այլ շատ կարևոր մաս են յուրաքանչյու՛ր քրիստոնյայի կյանքում, և ոչ թե միայն նրանց, ովքեր պայքարում են իրենց ձախողման դեմ:

18. Ներկայացրո՛ւ Գ. կետը՝ «Քայլեր ձեռնարկել նորից նույն ձախողումը չունենալու համար» (2-5 բույլ) Ուսանողի ձեռնարկ, 51-55-րդ էջեր:

Արագ կրկնի՛ր աճի երկու փուլերը, որոնց մասին մենք այսօր արդեն խոսել ենք՝ Ա. Հաղթահարել խնդիրը: Բ. Ապրել առողջ ապրելակերպով:

Քննարկման այս երրորդ և վերջին ասպարեզը վերաբերում է այն կոնկրետ ձախողումներին, որոնք նրանք ունեն իրենց կյանքում: Այստեղ մատնանշի՛ր երկու խնդիրներ: Առաջին. շատ մարդիկ չեն ուզում մտածել իրենց խնդիրների մասին, երբ ճգնաժամն արդեն անցյալում է: Երկրորդ. նրանք չեն գիտակցում, որ մենք հոգևոր պատերազմի մեջ ենք, և սատանան ամեն կերպ աշխատում է նրանց կործանել:

Այս բաժինն ամբողջությամբ իրականության մասին է. մենք պետք է նախապատրաստվենք դեպի մեզ եկող մարտերի համար:

19. Անցկացրո՛ւ Գ-1. ենթակետը՝ «Կրկնակի անկումը կանխարգելող ծրագի՛ր կազմիր» (2-5 բույս) Ուսանողի ձեռնարկ, 52-53-րդ էջեր:

Քաջալերի՛ր քո ուսանողներին, որ գրեն կրկնակի անկումը կանխող մի ծրագիր: Նրանք պետք է կողմնորոշվեն, թե հատկապես ո՛ր ասպարեզներում աճելու համար պետք է աշխատեն, և նաև՝ թե ինչ խնդիրների նրանք կհանդիպեն: Հիմա է ժամանակն այս ծրագրերը կազմելու, ոչ թե այն ժամանակ, երբ արդեն փորձությունները հանդիպեն:

Ծրագիրը պետք է ներառի երկու մաս.

1. Ի՞նչ անել, երբ հանդիպում ենք փորձության կամ դրդումի:
2. Ամենօրյա քայլեր ձեռնարկել այս խնդրից պաշտպանվելու համար: Մրանք առողջ ապրելակերպի համար են, ոչ թե ընդամենը խնդիրներ լուծելու ունակությունները զարգացնելու:

Մի բան է ծրագիր գրելը, մեկ այլ՝ ավելի դժվար բան է ծրագիրն իրականացնելը: Քաջալերի՛ր նրանց՝ Հիսուսի հետ ապրելու այս գործնական մոտեցումը կիրառելու համար:

Թերենս Թ. Գորսկիի և Մերլեն Միլլերի՝ «*Counseling for Relapse Prevention*» (Herald House—Independence Press) գրքի 54-66-րդ էջերում թվարկված են 37 քայլեր, որոնք սովորաբար տանում են կրկնակի անկման: Այս ցուցակը հրաշալի գործիք է կրկնակի անկման ուղին հասկանալու համար: Քո այսօրվա դասը, հավանաբար, հնարավորություն չի ընձեռի կրկնակի անկման 37 ախտանիշները քննարկելու համար, սակայն լավ կլինի դրանք մեկ դասաժամի ընթացքում մանրամասնորեն քննարկել, եթե կան ուսանողներ, որոնք նախկինում կախվածություն են ունեցել:

Խնդրում եմ՝ նշի՛ր, որ «*Counseling for Relapse Prevention*» գրքի ոչ բոլոր մտքերն էլ Թին Չելենջը ընդունում: Գրքի հեղինակների կողմից կախվածությունը որպես հիվանդություն դիտելը չի համապատասխանում կախվածության հաղթահարման համար Թին Չելենջի կողմից օգտագործվող քրիստոնեական մոդելին: Այնուամենայնիվ, այս գրքում կախվածության և վերականգնման վերաբերյալ տեղեկության մեծ մասը չի հակասում Թին Չելենջի հավատալիքներին, և դրանում քննարկված բազմաթիվ թեմաներ բավականին աստվածաշնչյան են, թեև հեղինակներն այդ համեմատությունները չեն անում:

Գորսկիի և Միլլերի կողմից նշված՝ կրկնակի անկման 37 ախտանիշներից յուրաքանչյուրը կարող է օգտագործվել նաև որպես վերականգնման հատուկ

թիրախ: Օրինակ, վերցնելով կրկնակի անկման յուրաքանչյուր ախտանիշ՝ դու կարող ես դրա դիմաց ներկայացնել տվյալ ախտանիշից վերականգնվելու համապատասխան քայլը:

Եթե դու որոշես մեկ այլ դասաժամ հատկացնել այս թեման ավելի մանրամասն ուսումնասիրելու համար, ապա կարող ես քո ուսանողներին խնդրել, որ գրեն, թե այդ 37 ախտանիշներից որոնք են եղել (կամ հիմա էլ են) խնդիր (կամ թուլություն) իրենց կյանքում: Որից հետո կարող ես բուռն քննարկում կազմակերպել առ այն, թե ինչ տարբեր քայլեր կարող են նրանք ձեռնարկել այն ասպարեզում աճելու համար, որը նրանց կօգնի հաղթահարել տվյալ ախտանիշը:

3

20. Անցկացրո՛ւ Գ-2. ենթակետը՝ «Զանազանի՛ր ներուժային (պոտենցիալ) դրդումները» (2-5 րոպե) Ուսանողի ձեռնարկ, 53-54-րդ էջեր:

Դրդումների այս թեման կարող էր ինքնին մի առանձին դաս լինել: Մենք այստեղ ընդամենն ուզում ենք ներկայացնել այդ հասկացությունը և օգնել նրանց, որպեսզի տեսնեն, թե ինչ դեր ունեն դրդումները նրանց դեպի ձախողում տանելու մեջ:

Այս դասն օգտագործի՛ր, որպեսզի քո ուսանողներին ներկայացնես Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդի՝ «Որո՞նք են քո դրդումները» բաժինը: Համոզվի՛ր, որ նրանք հասկանում են, թե ինչ են դրդումները, և թե ինչպես են դրանք կապված իրենց խնդիրների հետ: Այս նախագիծը պետք է ավարտին հասցնել նախքան հաջորդ դասաժամը:

Դրդումների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար կարդա՛ր Դեյվիդ Բեթթիի՝ «Ի՞նչ են դրդումները» հոդվածը: Այն զետեղված է www.iTeenChallenge.org կայքի Ministry Tools բաժնում:

21. Անցկացրո՛ւ Գ-3. ենթակետը՝ «Զարգացրո՛ւ հաշվետու լինելու փոխհարաբերություն» (2-5 րոպե) Ուսանողի ձեռնարկ, էջ 54-55-րդ:

Այս թեման ինքնին կարող էր առանձին դասաժամ լինել: Ընդգծի՛ր կարիքը՝ իրենց կյանքում ունենալու գոնե մեկ հոգու, ում պետք է հաշվետու լինեն: Այդ անձնավորությունը պետք է նրանց մոտ գտնվի, որպեսզի շաբաթը գոնե մեկ անգամ հանդիպեն նրա հետ:

Հստակեցրո՛ւ, որ այս տեսակի փոխհարաբերությունը կարող է հզոր ազդեցություն ունենալ՝ օգնելու նրանց՝ ձախողումը հաղթահարելու և հաղթական ապրելու հարցում: Մակայն սա կգործի, եթե նրանք

ամբողջությամբ անկեղծ լինեն: Եթե նրանք այդ անձնավորությունից գաղտնիքներ պահեն, ապա իրենք իրենց կոնեն նոր ձախողումներ ունենալու ուղու վրա:

Հաշվետվության փոխհարաբերություն ունենալ՝ չի նշանակում ոստիկան ունենալ քո կյանքում: Մենք այս տեսակի փոխհարաբերությանը պետք է նայենք որպես ընկերություն մեկի հետ, ով իրոք հոգ է տանում քեզ համար: Դա սիրո նշան է, ոչ թե անվստահության:

Եթե քեզ դուր չի գալիս մեկ այլ անձնավորությանը հաշվետու լինելու գաղափարը, ապա դա ցույց է տալիս քո ոչ-հասունությունը, ոչ թե ուժեղ լինելը:

22. Անձնական կիրառություն (5-10 րոպե):

Այսօրվա անձնական կիրառության համար քաջալերի՛ր նրանց՝ իրենց ձախողումներին անկեղծորեն նայելու համար: Թող նրանք ընտրեն իրենց կյանքի մի ասպարեզ և գնահատեն, թե որտեղ են գտնվում՝ *«Աճել իմ ձախողումների միջոցով»* աղյուսակում: Տե՛ս Ուսանողի ձեռնարկի 45-րդ էջը: Թող նրանք գրեն մեկ կամ երկու գործողության մասին, որ կարող են կատարել, որպեսզի ավելի արդյունավետ կիրառեն տվյալ ձախողումը հաղթահարելու Աստծո ձեռքով: Դու կարող ես նրանց հանձնարարել՝ գտնել աստվածաշնչյան առնվազն մեկ համար, որը կապ ունի այդ լուծման հետ, և բացատրել, թե ինչպես այդ համարը նրանց կօգնի աճելու համար:

23. Հանձնարարություններ:

- Ա. Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3-րդի՝ *«Իմ ձախողումը»* բաժնի համար:
- Բ. Դասի վերջում հարցաշա՛ր տուր Մաղմուս 32:8-9 հատվածի համար:
- Գ. Հանձնարարի՛ր քո ուսանողներին՝ կարդալ Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլուխը հաջորդ դասի քննարկմանը նախապատրաստվելու համար:
- Դ. Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4-րդի՝ *«Որո՞նք են քո դրողությունները»* բաժինը պետք է լրացված լինի հաջորդ դասի համար: Ուսանողներին բացատրի՛ր, որ 1-ին հարցը տեղ ունի 7 պատասխանների համար, իսկ 4-րդ հարցը տեղ ունի 5 պատասխանների համար: Մրանք բոլորն անձնական պատասխաններ են: Ուսանողներից չի պահանջվում գրել այդ հարցերի 7 և 5 պատասխաններն ամբողջությամբ, այլ այնքան,

որքան վերաբերում է իրենց: Եթե նրանք պատասխաններ չունեն, դու կարող ես դա քննարկել նրանց հետ՝ համոզվելու, որ հասկացել են նախագծում քննարկված այդ թեմաները:

24. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:

Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:

Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարահասկանալի:

Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 4.

Կրկնակի անկում

1. Աստվածաշնչյան բանալի ճշմարտություն:

Աստված իրական վերականգնման ճանապարհ ունի բոլոր նրանց համար, ովքեր նորից են ընկել:

2. Բանալի համար. Ա Կորնթացիներին 10:13

«Դուք ոչ մի այլ փորձության չեք ենթարկվել, բացի նրանից, ինչը հատուկ է մարդուն: Բայց Աստված հավատարիմ է և չի թողնի, որ ձեր կարողությունից ավելի փորձվեք, այլ փորձության հետ կտա նաև ազատվելու միջոց, որ կարողանաք այն կրել»:

3. Հղում ուսանողական նյութերին:

Ուսանողի ձեռնարկի 4-րդ գլուխը համընթաց է այս դասի հետ: Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 3-րդը և 4-րդը կարող են օգտագործվել այս դասին:

4. Դասի նախապատրաստում:

Այս դասաժամը ծրագրված է մի քանի հիմնական հարցեր քննարկելու համար՝ կապված կրկնակի անկման հետ: Կրկնակի անկման այս թեման, հնարավոր է, կարիք լինի սահմանել հենց սկզբում՝ կախված քո ուսանողների անցյալից: Եթե դու այս դասընթացն ուսուցանում ես Թին Չելենջի կենտրոնում կամ նմանատիպ մի ծրագրում, որը գործ ունի վատ անցյալով մարդկանց հետ՝ ներառյալ կախվածությունը, ապա, շատ հավանական է, որ քո ուսանողները ծանոթ լինեն կրկնակի անկում հասկացության հետ:

Քո ուսանողներին բացատրի՛ր, որ երբ մենք կրկնակի անկում բառակապակցությունը գործածում ենք այս դասաժամին, նկատի ունենք այն ընթացքը, երբ մարդը սայթաքելով նորից է ընկնում՝ հայտնվելով կախվածության, ձախողման կամ որևէ այնպիսի վարքագծի մեջ, որը մեզ հեռացնում է Աստծո այն լավագույնից, որը Նա ունի մեզ համար:

Եթե քո ուսանողներն անցյալում կախվածություն են ունեցել, ապա կրկնակի անկման թեման կարիք կլինի ավելի խորությամբ ուսումնասիրելու, քան այս մեկ դասաժամն է: Դասընթացը, որը հասանելի է, Դեյվիդ Բեթթի՝

«*Understanding the Steps to Relapse*» աշխատությունն է: Այն գետեղված է www.iTeenChallenge.org կայքում:

5. Դասի ջերմացման գործողություն (5 րոպե):

Այսօրվա դասը սկսի՝ ր մեկ կամ ավելի մարդկանց պատմություններով, ովքեր կրկնակի անկում են ունեցել: Մա կարող է կենդանի հարցազրույցի նմանվել: Կարող է տեսաձայնագրված հարցազրույց լինել: Կամ էլ դու կարող ես պարզապես կիսվել այդ մարդու պատմությամբ, ով կրկնակի անկում է ունեցել:

Թող այդ մարդը պատմի այն ընթացքի մասին, որը նրան տարել էր կրկնակի անկման, և թե ինչ էր նա զգացել դրանից հետո: Նաև թող այդ անձնավորությունը բացատրի, թե ինչպես է վերականգնվել իր կրկնակի անկումից:

4

6. Անցկացրո՛ւ Ա. կետը՝ «Յոթ պատճառներ, թե ինչո՛ւ է վերականգնումն արագ փոխվում կրկնակի անկման» (4-7 րոպե) Ուսանողի ձեռնարկ, 56-60-րդ էջեր:

Կարիք չկա այս պահին ընդարձակ կերպով քննարկել այս յոթ պատճառները: Մենք պարզապես ուզում ենք՝ ուսանողները գիտակցեն, որ կան յոթ տարբեր պատճառներ, թե ինչո՛ւ մարդիկ կարող են նորից արագ ընկնել այն բանից հետո, երբ ավարտել են վերականգնման ծրագիրը:

Մեկ այլ բան, որ մենք այս պահին նախօրոք ուզում ենք նշել, այն է, որ կրկնակի անկում սովորաբար լինում է, սակայն կան ձևեր այն կանխելու համար: Քո ուսանողներից որոշ անձնավորություններ, հնարավոր է, վախ ունենան կրկնակի անկման հանդեպ, և նրանց վախը շատ դեպքերում հիմնավորված է՝ իրենց անցյալի փորձառությամբ պայմանավորված:

Մյուսները չափազանց ինքնավստահ են և այն չեն տեսնում որպես ներուժային (պոտենցիալ) խնդիր իրենց կյանքում:

Մեր նպատակը նրանց մեջ վախ ներշնչելը չէ, այլ սա դարձնելը իրականության վրա հիմնված մի դաս: Կրկնակի անկումը կարող է խնդիր լինել ցանկացած մեկի համար, ով ունեցել է կախվածություն կամ կյանքի վրա իշխող որևէ խնդիր:

Եթե քո ուսանողների մեջ կան մարդիկ, ովքեր նախկինում կախվածություն են ունեցել, ապա դու կարող ես նրանց խնդրել՝ կամավոր սկզբունքով պատասխանել, թե արդյո՞ք նորից ընկել են վերականգնման

ծրագիր անցնելուց հետո: Նրանց կրկնակի անկումը համընկնում է այս յոթ պատճառներից որևէ մեկի հետ, թե՛ դրա համար մեկ այլ պատճառ է եղել:

7. Անցկացրո՛ւ Բ. կետը՝ «Ի՞նչն է պատճառ հանդիսանում կրկնակի անկման համար» (7-10 բույե) Ուսանողի ձեռնարկ, 60-62-րդ էջեր:

Ուսանողի ձեռնարկում թվարկված երեք խոշոր հարցերն ուսումնասիրելուց հետո ժամանակ հատկացրո՛ւ պատճառներից յուրաքանչյուրի համար պատկերավոր օրինակ բերելով:

Բ-2. Էնթակետը՝ «Չկարողանալ լուծել անցյալի խնդիրները», անցկացնելիս համոզվի՛ր, որ նրանք հասկանում են, թե որքան կարևոր է խնդիրների լուծման համար հոգևոր հմտություններ զարգացնելը: Հրաշագործ մտածելակերպը մարդուն հեշտությամբ կարող է տանել գաղափարին, որ նրանք ընդամենը պետք է հավատան Հիսուսին ու աղոթեն, և ամեն բան ինքնաբերաբար լավ կլինի: Բայց դա ճիշտ չէ: Քրիստոնեական կյանք ապրելն ամենօրյա գործընթաց է, մի բան, որ կարգ ու կանոն և համբերություն է պահանջում: Տե՛ս Հակոբոս 1:2-5:

Եթե սա ուսուցանվում է Թին Չելենջում կամ նմանատիպ վերականգնման ծրագրում, ուրեմն հստակորեն ներկայացրո՛ւ Բ-3. Էնթակետը. կրկնակի անկման պատճառ կարող է դառնալ մարդու անկարողությունը՝ մյուս կախվածությունները հաղթահարելու հարցում, և կյանքի վրա իշխող խնդիրները: Ընդգծի՛ր իրենց ողջ կյանքը Քրիստոսին հանձնելու կարևորությունը, այլ ոչ թե ընդամենն իրենց կախվածության խնդիրները:

8. Անցկացրո՛ւ Գ. կետը՝ «Հասկանալ կրկնակի անկումը» (7-10 բույե) Ուսանողի ուղեցույց, 62-64-րդ էջեր:

Նշված կետն անցնելիս քո ուսանողներին բացատրի՛ր, որ սույն բաժնի շատ հարցեր նման են այն հարցերին, որոնք մենք նախապես անցել էինք այս դասընթացում: Կրկնակի անկումը ձախողման մի առանձնահատուկ տեսակ է, որտեղ մարդը, ով նախկինում ձախողում էր ունեցել, օգնություն էր ստացել և վերականգնման քայլեր արել, սակայն հետո նորից ընկել էր նույն կամ այլ կործանարար վարքի կամ վիճակի մեջ:

Դասի այս մասը դասավանդելիս դու պետք է գնահատես կրկնակի անկման հետ կապված նրանց փորձառությունը և ընկալման մակարդակը: Այս երեք հարցերը, որոնք քննարկվում են այստեղ, մեկը մյուսի հետ փոխկապակցված են:

1. Ո՞րն է կախվածության տանող ուղին:
2. Ի՞նչ է վերականգնումը:
3. Ի՞նչ է կրկնակի անկումը:

Այս երեք հարցերը քննարկելիս կարևոր է տեսնել, թե ինչպես են ձախողումը և խնդիրը համապատասխանում բոլոր երեքին: Շատերը կախվածության ճանապարհը սկսում են որպես միջոց՝ ինքնուրույն բուժելու համար իրենց ցավերը, որոնք առաջացել են իրենց կյանքում առկա խնդրի պատճառով: Եթե նրանք չսովորեն, թե ինչպես նոր, հոգևոր ձևով լուծեն խնդիրները, կրկնակի անկումը, շատ հավանական է, որ դառնա իրենց ապագայի մի մասը:

Կրկնակի անկման մասին խոսելիս կարևոր է տեսնել զարգացող (պրոգրեսիվ) ախտանիշները: Թերենս Գորսկին և Մերլեն Միլլերը մի քանի գրքեր են գրել կրկնակի անկման վերաբերյալ, որոնցից մեկը «*Counseling for Relapse Prevention*» գիրքն է: Դու պետք է տեղյակ լինես, որ նրանք իրենց բոլոր աշխատությունները ներկայացնում են կախվածության հիվանդության բուժման մոդելի տեսակետից, սակայն կրկնակի անկման վերաբերյալ նրանց ասածի մեծ մասը ճիշտ թիրախին է կաչում, և ոչ միայն հարբեցողների, այլ ցանկացած կախվածության դեպքում:

Թերենս Թ. Գորսկիի և Մերլեն Միլլերի՝ «*Counseling for Relapse Prevention*» (Herald House—Independence Press) գրքի 54-66-րդ էջերում թվարկված են 37 քայլեր, որոնք սովորաբար տանում են կրկնակի անկման: Այս ցուցակը հրաշալի գործիք է կրկնակի անկման ուղին հասկանալու համար: Քո այսօրվա դասը, հավանաբար, հնարավորություն չի ընձեռի քննարկել կրկնակի անկման 37 ախտանիշները, սակայն լավ կլինի մեկ դասի ընթացքում այն հնարավորինս մանրամասն քննարկել, եթե կան ուսանողներ, որոնք նախկինում կախվածություն են ունեցել:

Խնդրում եմ, նշի՛ր, որ «*Counseling for Relapse Prevention*» գրքի ոչ բոլոր մտքերն են Թին Չելենջի կողմից ընդունվում: Գրքի հեղինակների կողմից կախվածությունը որպես հիվանդություն դիտելը չի համապատասխանում կախվածության հաղթահարման համար Թին Չելենջի կողմից օգտագործվող

քրիստոնեական մոդելին: Բայց և այնպես, կախվածության և վերականգնման վերաբերյալ այս գրքում տեղ գտած տեղեկության մեծ մասը չի հակասում Թին Չելենջի հավատալիքների հետ, և գրքում քննարկված բազմաթիվ թեմաներ շատ աստվածաշնչյան են, թեև հեղինակներն այդ համեմատությունները չեն անում:

9. Ներկայացրո՛ւ Դ. կետը՝ «Ի՞նչ անել, երբ կրկնակի անկում է տեղի ունենում» (3-5 բույե) Ուսանողի ձեռնարկ, 65-68-րդ էջեր:

Ներկայացնելով կրկնակի անկման այս մասը՝ կարևոր է, որ դու ճիշտ հիմք դնես դասի այս թեմայի համար:

Առաջին. ցանկացած մեկը, ով անցյալում կախվածություն է ունեցել, կրկնակի անկման հավանականություն ունի, եթե անգամ երկար տարիներ մաքրվել է դրանից:

Երկրորդ. մենք չենք ցանկանում տպավորություն ստեղծել, որ բոլորն ընկնում են, այնպես որ դա այդքան մեծ խնդիր է: Կրկնակի անկումը կործանարար է և երբեք ընտրության լավ տարբերակ չէ:

Երրորդ. Աստված շարունակում է նրանց սիրել, եթե անգամ նրանք նորից են ընկել: Եվ Նա պատրաստ կանգնած է՝ օգնելու համար նրանց, որպեսզի վերադառնան վերականգնման ուղու վրա:

Չորրորդ. Որոշ մարդիկ, ովքեր ազատվել են կախվածությունից, հնարավոր է՝ հրաշքով են փրկվել, երբ Աստված միանգամից բժշկել է, և նրանք չեն անցել դրանից ազատվելու տառապանքով: Եթե նրանք նորից ընկնեն, երաշխիք չկա, որ Աստված այս անգամ էլ նույն ձևով հրաշք կանի: Փաստն այն է, որ շատերը, ովքեր ակնկալել են դա, տեսել են, որ Աստված երկրորդ անգամ նույն հրաշքը չի արել: Աստված դեռևս պատրաստ է օգնել, սակայն այս անգամ դա կարող է բոլորովին այլ ընթացք ունենալ:

10. Քննարկի՛ր Դ. կետը՝ «Ի՞նչ անել, երբ կրկնակի անկում է տեղի ունենում» (10-15 բույսեր) Ուսանողի ձեռնարկ, 65-68-րդ էջեր:

Այս բաժնի յոթ ենթակետերը երբ ներկայացնես, դու կտեսնես, որ դրանց մի մասը նման են նրանց, որոնց մասին մենք նախապես խոսել էինք այս դասընթացի ժամանակ ձախողման անդրադառնալիս: Թե ինչպե՛ս նրանք պետք է արձագանքեն կրկնակի անկմանը, նման է այն բանին, թե ինչպես նրանք պետք է արձագանքեն ցանկացած ձախողմանը: Մասնավորապես նրանք պետք է հատուկ ուշադրություն դարձնեն իրենց վերականգնման ռազմավարությունը վերածրագրավորելիս:

Դու կարող ես դասի այս մասում օգտագործել Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4.-ի՝ «Որո՞նք են քո դրդումները» բաժինը: Կրկնակի անկման հետ գործ ունենալ նշանակում է՝ ավելի լավ հասկանալ, թե ինչպես են դրդումները փորձում մարդկանց նորից ներքաշել իրենց կախվածության մեջ:

4

Համոզվի՛ր, որ կրկնակի անկման թեման հավասարակշիռ կերպով է ընկալվում: Մենք չենք ուզում նվազեցնել կրկնակի անկման լրջությունը: Մյուս կողմից՝ մենք նաև չենք ուզում տպավորություն ստեղծել, որ եթե նրանք նորից ընկնեն, ուրեմն Աստծո օգնության վերաբերյալ այս ամբողջ ուսուցումը սուտ է:

Ընդհակառակը: Աստծո օգնությունն իրական է, և Նրա ասած ձևերն իրոք գործում են: Մարդու պարտականությունն է՝ ստանձնել կրկնակի անկման ամբողջ պատասխանատվությունը և սկսել վերականգնման դժվարին աշխատանքը: Հիսուսը պատրաստ է օգնել, սակայն Նա չի ուզում անել մեր կողմը, Նա ուզում է անել Իր կողմը:

Հիսուսն ասաց, որ եթե դու ուզում ես լինել Նրա աշակերտը, պետք է զաս, վերցնես քո խաչը և հետևես Նրան: Խաչ վերցնելը կախարդական փայտիկ չէ, այն խոսում է Հիսուսին հետևելու դժվարին մարտահրավերների մասին:

Անպայման դասն ավարտի՛ր հույսի ուժեղ պատգամով: Կարևոր չէ, թե քանի անգամ են նրանք կրկնակի անկում ունեցել, Աստված պատրաստ է նրանց օգնել՝ աճելու: Արժե, որ մենք կռվենք այդ ճակատամարտում: Նրանք պետք է իրենց հայացքը Հիսուսին հառեն:

Համոզվի՛ր, որ քո ուսանողները հասկանում են, որ հենց միայն այն պատճառով, որ ձախողվել են, դեռ չի նշանակում, որ կորցրել են իրենց փրկությունը: Սատանան կարող է ամեն տեսակի մեղադրանքներ բերել նրանց մտքում, երբ նրանք ձախողվում են, և կարող է անգամ ասել,

որ ամեն ինչ կորած է: Բայց դու պետք է քո ուսանողներին օգնես՝ տեսնելու, որ Աստված շարունակում է նրանց սիրել՝ անկախ այն բանից, թե քանի անգամ են ձախողվել: Կարևորն այն է, որ նորից բարձրանաս, Աստծուց ներում խնդրես և սկսես կենտրոնանալ այն բանին, թե ինչպես ավելի մոտենաս Աստծուն և աճես այն ասպարեզներում, որտեղ դու կարիք ունես ավելի ուժեղանալու:

11. Անձնական կիրառություն (5-7 րոպե):

Թող ուսանողները գրեն հինգ գործողություններ, որ նրանք կանեն կրկնակի անկումը կանխելու համար: Դուք կարող ես նրանց բաժանել երկու հոգանոց խմբերի, որպեսզի իրար հետ կիսվեն իրենց պատասխաններով, իսկ հետո աղոթեն միմյանց համար:

12. Հանձնարարություններ:

Գնահատակա՛ն դիր Ուսուցման ուղեցույց, Նախագիծ 4.-ի՝ «Որո՞նք են քո ղրղումները» բաժնի համար: 1-ին հարցն ունի 7 պատասխանի տեղ, իսկ 4-րդ հարցը՝ 5 պատասխանի: Դրանք բոլորն անձնական պատասխաններ են: Ուսանողներից չի պահանջվում գրել այդ հարցերի բոլոր՝ 7 և 5 պատասխանները, այլ այնքան, որքան վերաբերում է նրանց: Եթե նրանք պատասխաններ չունեն, դու կարող ես դա քննարկել նրանց հետ՝ համոզվելու, որ նրանք հասկացել են այս նախագծում քննարկված թեմաները:

13. Դասի գնահատում:

Խնդրում եմ, գրի՛ր մտքեր այս դասի բարելավման համար:
 Ո՞ր հատվածներն էին լավագույնս աշխատում:
 Ո՞ր մասերն էին ուսանողների համար դժվարհասկանալի:
 Ի՞նչն ամենաօգտակարը թվաց քո ուսանողներին:

Դաս 5: Ստուգարք

1. Նախաբան:

Ներկայացրե՛ք հաջորդ դասընթացը:

- Ա. Բաժանե՛ք Ուսուցման ուղեցույցը, կամ այլ նախագծեր, որոնք պետք է լրացվեն՝ նախքան դուք դրանք կուսուցանեք հաջորդ դասընթացի առաջին դասին:
- Բ. Թող ուսանողները բացեն իրենց նոր Ուսուցման ուղեցույցի վերջին էջը: Նրանք այնտեղ կգտնեն *Դասարանական Հանձնարարության Ցուցակի* չլրացված բլանկի մի օրինակ: Ասացե՛ք նրանց յուրաքանչյուր հարցաշարի, նախագծի և ստուգարքի ժամկետները:
- Գ. Բաժանե՛ք նոր Ուսանողի ձեռնարկը և ասացե՛ք նրանց, թե որ էջն էք ուզում, որ նրանք կարդան՝ նախքան հաջորդ դասը սկսվելը:

5

2. Ստուգա՛րք անցկացրեք այս դասընթացի վերաբերյալ:

- 3. Եթե դեռ չեք արել, ապա վերադարձրե՛ք այն բոլոր հարցաշարերը և նախագծերը, որոնց դուք գնահատական եք դրել:

Ուսանողի ձեռնարկ

Ուսանողի ձեռնարկը ներառված չէ այս փաստաթղթում, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝
լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպե՛ս օգտագործել Ուսանողի
ձեռնարկը:

Ուսուցման ուղեցույց

Ուսուցման ուղեցույցը ներառված չէ այս փաստաթղթի մեջ, սակայն հասանելի է որպես առանձին փաստաթուղթ:

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-րդ էջը՝
լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպես օգտագործել Ուսուցման
ուղեցույցը:

Ստուգարք և Վկայական

Ստուգի՛ր, թե «Ինչպե՛ս օգտագործել այս Ուսուցչի ձեռնարկը» բաժնի 5-6-րդ էջը՝
լրացուցիչ տեղեկությունների համար, և թե ինչպե՛ս օգտագործել Ստուգարքն ու
Վկայականը:

Անուն _____

Աճել ձախողումների միջոցով

Ամիս, ամսաթիվ _____

Ստուգարք, 5-րդ խմբագրում

Դասարան _____

_____ դասարան

Ճիշտ-սխալ հարցեր (յուրաքանչյուրը 1 միավոր)

Ցուցումներ. Դի՛ր X, եթե պատասխանը ճիշտ է:

Դի՛ր O, եթե պատասխանը սխալ է:

1. _____ Ամեն անգամ ձախողվելիս մարդը մեղք է գործում:
2. _____ Ամեն անգամ, երբ դու ձախողվում ես, Աստված բարկանում է քեզ վրա:
3. _____ Աստված խոստացել է ներել քեզ, եթե դու անկեղծորեն խնդրես Նրան:
4. _____ Եթե ես ձախողվեմ, ապա ոչ մի դեպքում չպետք է ընդունեմ, որ սխալ էի:
5. _____ Հաջողակ քրիստոնյաները ոչ մի հարցում ոչ մի անգամ չեն ձախողվում:
6. _____ Երբ ես Աստծուն խնդրում եմ ներել ինձ մեղք գործելու համար, պետք է որոշում կայացնեմ՝ դադարել այդ մեղքը գործել:
7. _____ Ես միշտ պետք է փորձեմ գտնել իմ ձախողման պատճառը:
8. _____ Ծիսելն արմատական խնդիր է:
9. _____ Իմ խնդիրների արմատական պատճառն իմ ձևով վարվելն է՝ Աստծո ձևով վարվելու փոխարեն:
10. _____ Նյութական արժեքներն առաջինը դնելու բնական հետևանքը անապահովությունն է:
11. _____ Այն մարդը, ով շատ է քննադատում, սովորաբար դառնության արմատական խնդիր ունի:
12. _____ Երբ ես ինչ-որ մեկից ներողություն եմ խնդրում, միշտ պետք է սկսեմ՝ ասելով. «Եթե ես սխալ էի, խնդրում եմ, ների՛ր ինձ»:
13. _____ Ես չպետք է ներեմ դիմացինին, քանի դեռ նա չի փոխհատուցել ինձ իր գողացած իրի համար:
14. _____ Ներում խնդրելու լավագույն ձևը նամակով ներողություն խնդրելն է:
15. _____ Եթե շարունակ ձախողվում ես, դա միշտ նշանակում է, որ դու քո կյանքի տվյալ ասպարեզում ընդհանրապես չես աճում:
16. _____ Քրիստոնյաները երբեք չեն ձանձրանում:
17. _____ Աստված կամենում է, որ ես միշտ ներեմ, եթե անգամ դիմացինը չի ընդունում, որ ինքը սխալ է:
18. _____ Կրկնակի անկման առաջին քայլն այն է, երբ մարդը նորից սկսում է օգտագործել իր կախվածության նյութը՝ թմրանյութ, ալկոհոլ և այլն:

19. _____ Մարդը չի կարող կրկնակի անկում ունենալ, եթե նախապես վերականգնում չի ունեցել:
20. _____ Եթե ես ինչ-որ մեկի հետ վիճեմ, պետք է նրանից ներողություն խնդրեմ, եթե անգամ գիտեմ, որ սխալ չեի:

Բազմակի ընտրությամբ հարցեր (յուրաքանչյուրը 2 միավոր):
Ցուցումներ. ընտրի՛ր լավագույն պատասխանը և պատասխանի տառը գրի՛ր հարցի դիմացի դատարկ գծիկի վրա:

1. _____ Երբ ես ձախողվում եմ, Աստված սովորաբար արձագանքում է.
 Ա. բարկությամբ
 Բ. տխրությամբ
 Գ. ուրախությամբ
2. _____ Երբ ես ձախողվում եմ, պետք է այսպես պատասխանեմ իմ խնդրին.
 Ա. Կարճ ժամանակով մոռանամ դրա մասին:
 Բ. Կարճ ժամանակով փախչեմ դրանից:
 Գ. Գտնեմ իմ խնդրի պատճառը:
3. _____ Երբ ես ներողություն եմ խնդրում, պետք է ասեմ.
 Ա. «Ես սխալ էի, դու կներե՞ս ինձ»:
 Բ. «Ես սխալ էի, բայց դու էլ էիր սխալ»:
 Գ. «Կներես»:
 Դ. «Եթե ես սխալ էի, խնդրում եմ, ների՛ր ինձ»:
4. _____ Երբ ես ձախողվում եմ, դա.
 Ա. Միշտ իմ սխալն է:
 Բ. Միշտ նաև ուրիշի սխալն է:
 Գ. Երբեք իմ սխալը չէ:
5. _____ Երբ ես ձախողվում եմ, ես.
 Ա. Ոչ մի անգամ մեղք չեմ գործում:
 Բ. Երբեմն մեղք եմ գործում:
 Գ. Ամեն անգամ մեղք եմ գործում:

Համառոտ շարադրության հարցեր:

1. Ներքևում գրի՛ր անգիր համարներ (14 միավոր):

2. Որո՞նք են այն երեք կարևորագույն խնդիրները, որոնք մեր բոլոր խնդիրների արմատն են հանդիսանում (6 միավոր, յուրաքանչյուր մասը 2 միավոր):

1. _____

2. _____

3. _____

3. Ո՞րն է իմ բոլոր խնդիրների արմատական պատճառը (4 միավոր):

4. Բե՛ր մի օրինակ, թե ինչ տեղի ունեցավ, երբ դու այս շաբաթ գնացիր ինչ-որ մեկի (որին վիրավորել էիր կամ նեղացրել) մոտ և ներողություն խնդրեցիր:

Ա. Ի՞նչ ասացիր, երբ նրանից ներողություն էիր խնդրում (5 միավոր):

Բ. Ինչպե՞ս նա արձագանքեց (5 միավոր):

Գ. Ի՞նչ զգացիր դու, երբ ներում ստացար (5 միավոր):

Դ. Ի՞նչ սովորեցիր այդ փորձից (3 միավոր):

1. _____

2. _____

3. _____

5. Որո՞նք են ձախողումների միջոցով աճելու երեք գլխավոր ասպարեզները (6 միավոր, յուրաքանչյուր մասը 2 միավոր):

1. _____
2. _____
3. _____

6. Դեպքի ուսումնասիրություն:

Դայանան չորս ամիս առաջ դարձել է ճշմարիտ քրիստոնյա: Նա իրեն մեղավոր է զգում, քանի որ նախքան ճշմարիտ քրիստոնյա դառնալը իր ընկերուհուց 100 դոլար էր գողացել:

- Ա. Ի՞նչ պետք է անի Դայանան (5 միավոր): _____
- _____
- _____

- Բ. Ի՞նչ պետք է ասի Դայանան իր ընկերուհուն: Գրի՛ր, թե հատկապես ինչ բառերով նա պետք է դիմի ընկերուհուն (5 միավոր):

- _____
- _____
- _____

7. Ա. Բե՛ր մի օրինակ քո կյանքի ձախողումներից (4 միավոր):

- _____
- _____
- _____

- Բ. Ի՞նչ քայլեր ես դու ձեռնարկում աճելու համար, որ նորից այդ նույն ասպարեզում չընկնես (8 միավոր, յուրաքանչյուր մասը 2 միավոր):

1. _____
2. _____
3. _____
4. _____

Աճել ձախողումների միջոցով
Ստուգարք, 5-րդ խմբագրում
Պատասխաններ

Էջ 1.

Ճիշտ-սխալ հարցեր

(յուրաքանչյուրը 1 միավոր)

1. 0 սխալ

2. 0 սխալ

3. X ճիշտ

4. 0 սխալ

5. 0 սխալ

6. X ճիշտ

7. X ճիշտ

8. 0 սխալ

9. X ճիշտ

10. X ճիշտ

11. X ճիշտ

12. 0 սխալ

13. 0 սխալ

14. 0 սխալ

15. 0 սխալ

16. 0 սխալ

17. X ճիշտ

18. 0 սխալ

Էջ 2.

19. X ճիշտ

20. X ճիշտ

Բազմակի ընտրության հարցեր.

(յուրաքանչյուրը 2 միավոր)

1. Բ

2. Գ

3. Ա

4. Ա

5. Բ

Համառոտ շարադրության հարցեր.

1. 14 միավոր

Մատթեոս 6:14-15

Մադմոս 32:8-9

ԱՃել ձախողումների միջոցով
Ստուգարք, 5-րդ խմբագրում
Պատասխաններ

Էջ 3.

2. 6 միավոր (յուր. մասը 2 միավոր)

1. Դառնություն:
2. Նյութապաշտական արժեքներ:
3. Անբարոյություն:

3. 4 միավոր.

Առաջարկվող պատասխաններ.

Իմ ձևով վարվել՝ Աստծո ձևով վարվելու փոխարեն:

Այլընտրանքային պատասխան.

Դիմադրել կամ մերժել այն ցանկությունը և զորությունը, որ Աստված տալիս է մեզ՝ կյանքին Իր ուզած ձևով արձագանքելու համար:

4. Ա. Անձնական պատասխան (5 միավոր)

- Բ. Անձնական պատասխան (5 միավոր)
- Գ. Անձնական պատասխան (5 միավոր)
- Դ. 3 միավոր (յուրաքանչյուրը 1 միավոր)
 1. Անձնական պատասխան
 2. Անձնական պատասխան
 3. Անձնական պատասխան

Էջ 4.

5. 6 միավոր (յուր. մասը 2 միավոր). Առաջարկվող պատասխաններ.

1. Հաղթահարել խնդիրը:
2. Ապրել առողջ ապրելակերպով:
3. Քայլեր ձեռնարկել տվյալ ձախողումը նորից թույլ չտալու համար:

6. Ա. Անձնական պատասխան (5 միավոր)

Բ. Անձնական պատասխան (5 միավոր)

7. Ա. Անձնական պատասխան (4 միավոր)

- Բ. 8 միավոր (յուր. մասը 2 միավոր)
 1. Անձնական պատասխան
 2. Անձնական պատասխան
 3. Անձնական պատասխան
 4. Անձնական պատասխան

Շնորհավորում ենք

-ին, առ այն, որ նա ավարտել է

Աճել ձախողումների միջոցով

դասընթացի ուսումնական պահանջները:

Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____

Շնորհավորում ենք

-ին, առ այն, որ նա ավարտել է

Աճել ձախողումների միջոցով

դասընթացի ուսումնական պահանջները:

Մենք գնահատում ենք Ձեր մասնակցությունը այս դասընթացին և հուսով ենք, որ Դուք հաջողությամբ կշարունակեք Ձեր կյանքում կիրառել այն աստվածաշնչյան ուսուցումները, որոնք դուք սովորել եք այս դասընթացի ընթացքում:

Ուսուցիչ _____

Ամիս, ամսաթիվ _____

